

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԳԵՍԻԱՅԻ
ԱՐՎԵՍՏԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Մանուկ Մանուկյան

**ՄԱՐՏՈՒՆՈՒ ՇՐՋԱՆԻ
ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԵՐԳԵՐ**
(1974-77 թթ. գիտարձայի նյութերից)



ԵՐԵՎԱՆ

1997

ՀԱՅԿԵՆԿԱՆ ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԳԵՄԻԱՅԻ
ԱՐՎԵՍՏԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ


Մանուկ Մանուկյան

ՄԱՐՏՈՒՆՈՒ ՇՐՋԱՆԻ
ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԵՐԳԵՐ

(1974-77 թթ. գիտարշավի նյութերից)

Մ/թյակը հավթում էմ ՀՀԳ ՆԻՆ
Ֆունկցիոնալ ընդհանուր զգայաբանություն
5 V 97թ.

A II
84066



ԵՐԵՎԱՆ

1997

Խմբագիրներ՝

Դ. Դերոյան, Ժ. Մեհրաբյան, **Մ. Մուրադյան**,

Կ. Խուդաբաշյան (պատ. խմբագիր), Հ. Պիկիչյան

ՄԱՆՈՒԿ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՄԱՐՏՈՒՆՈՒ ՇՐՋԱՆԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԵՐԳԵՐ (1974-77 թթ. գիտարշավների նյութերից): Ձայնագրեց, նոտագրեց, կազմեց, ներածութունն ու ծանոթագրութունները գրեց Հեղինակը:

Ժողովածուն ընդգրկում է հայկական ժողովրդական, աշուղա-գուեսանական և հեղինակային 85 երգ, Հայաստանի Գիտությունների Ազգային Ակադեմիայի Արվեստի ինստիտուտի Մարտունու շրջանում կազմակերպած գիտարշավների նյութերը (ձայնագրությունները պահպանվում են ինստիտուտի ձայնագրարանում):

Ժողովածուն պատկերացում է տալիս շրջանի բնակչության ավանդական և նորաստեղծ երգերի մասին:

Ժողովածուն լույս է տեսնում
Մարտունու շրջանի ծնունդ, Հայաստանի
Հանրապետության Ազգային Ժողովի պատգամավոր,
«Հայաստան-շինարար» բաժնետիրական ընկերության
գլխավոր տնօրեն՝

ՎԱԶԳԵՆ ՊՈՂՈՍՅԱՆԻ

սիրալիր հովանավորությամբ:

Публикация настоящего сборника
осуществлена благодаря содействию депутата
Национального Собрания Армении,
господина **ВАЗГЕНА ПОГОСЯНА**.

ԱՌԱՋԱԲԱՆ

Գեղարքունիքի մարզի մի մասը կազմող Մարտունու շրջանը, որ 1930 թ. մինչև 4.12.1995 թ. վարչատարածքային առանձին միավոր էր, եղել է և մնում է բարենպաստ միջավայր հայկական ժողովրդական երգարվեստի հարատևման և զարգացման համար: Սևանի հարավ-արևելյան ափերը պատնեշող սարերի հովիտներում ծվարած այդ գյուղերի բնակչության առօրյա կենցաղում և հանդիսություններին ժամանակ երգվող ավանդական կամ նորաստեղծ երգերում արտահայտված են և՛ համազգային, և՛ տվյալ միջավայրին հատուկ ինքնուրույն գծեր: Այդ երգերը իրենց դեղարվեստական արժանիքներով չեն գիջում Հայաստանի այլ վայրերի երգերին:

Հայկական ժողովրդական երգարվեստի այս միջավայրը բազմիցս գրավել է բանահավաքների ուշադրությունը: 1927 թ. այստեղ աշխատել և ֆոնոգրաֆով ձայնագրություններ է կատարել Լենինգրադի կոնսերվատորիայի գիտաբանը, որի կազմում էին Բ. Քուչնարյանը, Զ. Էվալդը և Ե. Գիպիուսը (ձայնագրությունները պահպանվում են Սանկտ Պետերբուրգի Պուշկինի թանգարանում, պատճենները՝ ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի ձայնագրանոմ):

1926-27 թթ. այստեղ ձայնագրություն է կատարել Սպիրիդոն Մելիքյանը: Պահպանվել են բանահավաքի նոտագրությունները. դրանցից մի քանիսը տպվել են Մ. Աղայանի ջանքերով Հրատարակված Ս. Մելիքյանի բանահավաքական ժառանգության հետմահու երկհատորյակի 2-րդ հատորի Նոր-Քայագետին նվիրված բաժնում (տե՛ս Ս. Մելիքյան, Ժողովրդական երգեր և պարեր, Երևան, 1952):

Արվեստի ինստիտուտի գիտաշխատակից Վ. Սամվելյանը 1950-51 թթ. Մարտունու շրջանում կատարել է մագնիտաֆոնային ձայնագրություններ, որոնք այժմ պահպանվում են Արվեստի ինստիտուտի ձայնագրանոմ: Այդ նյութերի մի մասը տպվել է Վ. Սամվելյանի Հայկական ժողովրդական երգեր, Երևան, 1961, ժողովածուի 41-59 էջերում:

Թվարկված գիտաբանների նյութերը առաջին պատկերացումը ստեղծեցին Մարտունու շրջանի ժողովրդական երաժշտության մասին և հիմք դարձան հետագա որոնումների և ուսումնասիրությունների համար:

1974-77 թթ. Արվեստի ինստիտուտի ժողովրդական երաժշտության բաժինը, տողերիս հեղինակին և Հնչյունային տեխնիկ Հայկ Մելոյա-

նին գործուղելով Մարտունու շրջան, գիտարշավների մի նոր շարք կազմակերպեց՝ տեղում նոր ձայնագրություններ կատարելու, ժողովրդի առօրյա կյանքում հնչող երգերը ֆիքսելու, ստեղծագործական և կատարողական գործընթացը ուսումնասիրելու, հին և նոր երգերի տեղի միջավայրում վայելած գնահատման սուբյեկտիվ և օբյեկտիվ պատճառներն ու չափանիշները նկատելու, բանավոր փոխանցման պայմաններում ժողովրդի հիշողութայն մեջ երգերի պահպանման հուսալիությունը և այլ նման խնդիրներ ուսումնասիրելու համար: Այլ կերպ ասած, ուսումնասիրել ոչ միայն ժողովրդական երգերի առանձին օրինակները, այլև միջավայրի հասարակութայն և երգարվեստի փոխհարաբերությունները: Մանավանդ, որ Մարտունու շրջանում, ինչպես և այլուր, ժողովրդական երգարվեստը մի քարացած հուշարձան է, այլ ժողովրդի կյանքին զուգընթաց զարգացող կենսունակ մի գործընթաց:

Ահա այդ նյութերը հանրութայն սեփականությունը դարձնելու նպատակին է ծառայում ներկա ժողովածուն: Մենք հավակնություն չունենք սպառիչ ու ամբողջական ներկայացնելու Մարտունու շրջանի ժողովրդական երաժշտությունը: Համոզված ենք, որ նման խնդիրն իրագործել հնարավոր կլինի հայկական ժողովրդական երաժշտական համահավաքի հրատարակությունը ձեռնարկելիս, երբ հավաքված և հրատարակված նյութի հիման վրա կգնահատվի յուրաքանչյուր օրինակի գեղարվեստական, պատմական, ազգագրական արժեքն ու նշանակությունը՝ համահայկական, բարբառային ու տեղական չափանիշներով, երբ պարզաբանված կլինեն երգերի տարբերակային խմբերը աշխարհագրական, ժանրային կամ հեղինակային առումով:

Ուստի մեր խնդիրն ենք համարել ժողովածուի միջոցով ներկայացնել Մարտունու շրջանի ժողովրդական երգարվեստի 1970-ական թվականների վիճակը-պատկերը, ոչ սոսկ որպես ավանդական և նորաստեղծ երգերի մի թվաբանական գումար, այլ որպես ժողովրդական ստեղծագործություն այդ ռեգիոնում նկատվող ակտիվ գործընթացների ամբողջություն:

Այդ նպատակի իրագործման համար բավարար համարեցինք մեր ձայնագրած երգերից ընտրել և ժողովածուի էջերում ներկայացնել 85 երգ: Երգերի ընտրությունը կատարելիս նկատի ենք ունեցել նրանց թե՛ գեղարվեստական արժանիքները, և թե՛ դիտական հետաքրքրությունը այն միտումով, որ հնարավորին չափ նկատելի դարձնենք տվյալ միջավայրի ժողովրդական երգարվեստի գեղագիտական չափանիշների դիսպազոնը, նախասիրված ժանրերը, թեմաները, սյուժեները, բնորոշ ձայնակարգային, ինտոնացիոն, մետրառիթմիկ բանաձևերը

կամ արտահայտչական այլ միջոցները, ինչպես նաև ավանդական երգերի հարատևման ձևերի ու նոր երգերի ստեղծման պայմանները:

Մեր տեսադաշտից դուրս են մնացել շրջանի երաժշտական կենցաղում որոշակի դեր ունեցող պրոֆեսիոնալ և նրան հարող ինքնագործ երաժշտական արվեստը:

Շնորհակալութուն ենք հայտնում ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի ժողովրդական երաժշտության բաժնի վարիչ Կ. Խուդաբաշյանին և նույն բաժնի աշխատակիցներին, ինչպես նաև Պետկոնսերվատորիայի ավագ դասախոս Ա. Բաղդասարյանին այն օժանդակության համար, որ նրանք ցուցաբերեցին ներկա ժողովածուի հրատարակության նախապատրաստման ընթացքում:

Շնորհակալութուն են հայտնում նաև պրոֆեսոր Ա. Փահլիվանյանին, որ ժողովածուի ամբողջ նյութը սիրահոժար թարգմանեց բուն սերունդին: Ցավոք, ներկայիս հրատարակչական ծախսերի խիստ խնայողության պայմաններում ստիպված եղանք չտալել այդ դեղեցիկ թարգմանութունները: Թարգմանութունները այժմ պահպանվում են Արվեստի ինստիտուտի ձայնադարանում:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Նախքան Մարտունու շրջանի ժողովրդական երգարվեստի առավել ցայտուն առանձնահատկությունները բնութագրելը, հակիրճ նշենք այն օբյեկտիվ նախադրյալները, որոնք կանխորոշել են այդ բնորոշ գծերը:

Առաջին հերթին նկատենք, որ Մարտունու շրջանի աշխարհագրական դիրքը և բնությունը բավականաչափ նպաստավոր են ժողովրդական երգարվեստի զարգացման և հարատևման համար:

Կապուտակ Սևանի, զմրուխոյա ալպիական մարգագետինների ու ձորերի գեղատեսիլ բնապատկերները, անշուշտ, նպաստում են մարդու բանաստեղծականությանը հագեցված մտածողությանը, հոգեկան աշխարհի անմիջականությանը ու խորությանը: Լեռնային, բարձրադիր այս շրջանում, անասնապահության հետ զուգահեռ, զարգացած է նաև դաշտավարությունը, իսկ վերջին տասնամյակներում՝ այգեգործությունը (հիմնականում խնձորենու այգիներ): Այսպիսով, ինչպես գյուղի, այնպես էլ ընտանիքի չափանիշով բնակչության զբաղմունքը, մարդկանց կյանքը բավականաչափ բազմազան է, ուստի բազմազան է նաև ժողովրդական ստեղծագործությունը:

Սևանի ավազանի տարածքում դեռ հազարամյակներ առաջ ապրած բնակչության զարգացած մշակույթի մասին են վկայում կիկլոպյան ամրոցները (տես՝ Միքայելյան Գ., Սևանի ավազանի կիկլոպյան ամրոցները, Երևան, 1975), ժայռապատկերներն ու պեղումներից հայտնաբերված աշխատանքային գործիքների, կենցաղային իրերի, զենքերի ու զարդերի գեղարվեստական բարձր արժեք ունեցող նմուշները (տես՝ Մարտիրոսյան Լ., Գեղամա լեռների ժայռապատկերները, Երևան, 1981):

Երաժշտական մշակույթի ներկայացման առումով առավել խոսուն են ուշ միջնադարի նյութերը: Հիշենք տապանաքարերի վրա մեծ վարպետությամբ կատարված բարձրաքանդակները, որոնցից շատերը հարսանեկան կամ կենցաղային տեսարաններ ներկայացնելով, երբեմն բավականաչափ մանրամասնորեն փորագրված պատկերների միջոցով տեղեկություններ են հաղորդում ուշ միջնադարի նվագարանների մասին: Այդ բարձրաքանդակներից երևում է, որ կենցաղում տարածված են եղել ժամանակի ամենաբարդ նվագա-

րանները, այդ թվում լարայինների բոլոր տարատեսակները՝ կամիթային, հարվածային, աղեղային, ինչպես նաև նվագարանների տարբեր համադրությունները:

Սակայն այդ համեմատաբար բարեկեցիկ կյանքը ինչ-որ պատմական ժամանակաշրջանում ընդհատվեց, Սևանի ափերի երբեմնի ծաղկուն բնակավայրերը ամայացան:

1828 թ. հետո, երբ Արևելյան Հայաստանի մի փոքր մասը միացավ Ռուսաստանին, Արևմտյան Հայաստանի մի շարք շրջաններից հագարավոր հայեր դուրս եկան թուրքական տիրապետության տակ գտնվող իրենց տոհմիկ բնակավայրերից ու, թողնելով իրենց պապեմական արտն ու արոտը, տունն ու տեղը մի ավելի ապահով կյանքի հույսով, հաստատվեցին Ռուսաստանին միացած վայրերում: Վերաբնակվողները, ի թիվս այլ հոգևոր գանձերի, իրենց հետ բերին նաև ժողովրդական երաժշտության հարուստ և կենսունակ ավանդույթներ, որոնք տեղում հարատևեցին ու զարգացան: Այսպիսով, Մարտունու շրջանի այժմյան ազգաբնակչությունը շարունակում է ոչ թե տեղի միջնադարյան ավանդույթները, այլ իր նախկին հայրենիքից՝ Ալաշկերտից և Տարոնից բերված երաժշտական արվեստը: Ի դեպ նշենք, որ Մարտունու շրջանի վերաբնակիչները բավականին շուտ համահարթեցին բարբառային տարբերությունները, որոնք, պիտի ենթադրել, նախապես կային տարբեր վայրերից եկածների մեջ:

ԻՆՉՊԵՍ ԵՆ ԵՐԳՈՒՄ

Մարտունու շրջանի գյուղերի բնակչությունը ոչ նվազ երգասեր է, քան հայկական ժողովրդական երգարվեստի հարուստ ավանդույթներով հռչակված այլ շրջաններինը: Երգեր լսել ու երգել սիրում են բոլորը. թե՛ մեծ, թե՛ փոքր երգում են առօրյա կյանքի ընձեռած համարյա բոլոր հարմար առիթներով, լինի դա հասարակական, ընտանեկան, ընկերական հանդիսություն կամ պարզապես հավաքույթ, սովորական ժամանց կամ որևէ առօրյա գործին զուգընթաց երգելու, թեևուզ դնդնալու հնարավորություն:

Իհարկե, ժամանակակից կյանքն իր տեխնիկական առաջընթացով երգելու ավելի ու ավելի քիչ առիթներ է տալիս, մույնիսկ ազգաբնակչության ամենաերգասեր խավին՝ գյուղացիությանը:

Անցյալի գյուղական աշխատանքային պրոցեսների արմատական փոփոխումների հետևանքով Մարտունու շրջանում, ինչպես և ամենուրեք, գեղջկական աշխատանքային երգերը համարյա ամբողջ-

չովին դուրս եկան գործածությունից և պատմություն դառնալով, այսօր մտաբերվում ու մասնակի հատվածներով երգվում են հիմնականում մեծահասակների կողմից:

Նոր կյանքի «բարեփոխիչ» ուժն անդրադարձել է նաև անասան թվացող ծիսական երգերի հարակալության վրա: Այս բնագավառի երգերը, հատկապես հարսանեկան ծեսի հետ կապվածները, կորցնելով իրենց վաղեմի խորհրդանշական հիմքը, հավատալիքների աստիճանական վերացմանը զուգընթաց, ավելի ու ավելի ձեռք են բերում լոկ գեղագիտական նշանակություն և հեռանում անցյալում պարտադիր համարվող կանոններից ու հաջորդականությունից: Դեռ ավելին, ծիսական, հարսանեկան երգերի վերաիմաստավորման պրոցեսում հավատալիքների հետ առավել սերտորեն կապված շատ երգեր մոռացվում և գործածությունից դուրս են գալիս: Երբեմն այդպիսի երգերի տեղը զբաղեցնում են սիրո քնարականությամբ կամ պարայնությամբ հագեցված կենսուրախ երգերը:

Անցյալում առօրյա կենցաղում երգելու առիթ ստեղծող գործոններից էր երգեր լսելու պահանջը, որը սակայն այժմ հիմնականում բավարարվում է ուղիղ-հեռուստատեսային ամենօրյա հաղորդումների, կինոյի, մագնիտաֆոնային ձայնագրությունների և այլ տեխնիկական միջոցների շնորհիվ: Այսպիսով, գեղջկական բնակչության կենցաղում երգելու առիթները խիստ նվազել են: Սակայն առանց վարանելու կարող ենք ասել, որ, այդուամենայնիվ, Մարտունու շրջանի բնակիչներն իրենց առօրյա կյանքում դեռ բավականաչափ մեծ ակտիվությամբ են մասնակցում ժողովրդական երգարվեստի կատարողական և ստեղծագործական ընթացքին: Նշենք, որ այսպիսով դրսևորվում է ժողովրդական երգարվեստի ամենակարևոր յուրահատկություններից մեկը՝ ժողովրդական երգի կատարման և ունկնդրման յուրահատուկ ֆունկցիոնալ միասնությունը, որի շնորհիվ մարդիկ (հատկապես գյուղական միջավայրում) չեն բավարարվում միայն երգն ունկնդրողի պասսիվ դերով և կարիք են զգում նաև ակտիվ կատարողական մասնակցությամբ հաղորդակից դառնալ այդ երգային գործընթացին:

Այս իմաստով սխալված չենք լինի, ասելով, որ Մարտունու շրջանը հայկական ժողովրդական երգարվեստի ավանդույթների կենսունակության հարատևման կենտրոն է:

Տեղի գյուղերի բնակիչները երգում են սիրով, առանց կաշկանդվելու: Ունկնդրողները լսում են ակնածանքով, բայց հարկ եղած դեպքում չեն վարանում քննադատական դիտողություններ անել: Երգողներն առհասարակ հարազատ են մնում հայկական ժողովրդա-

կան երգարվեստի կատարողական և ռճական համագային ավանդույթներին: Ինչպես միշտ և ամենուրեք, կանայք համեմատաբար ավելի գեղեցիկ, պարզ ու հստակ են երգում, իսկ տղամարդիկ, հատկապես հասակավորները, աշուղական երգարվեստի ռճից եկող, հաճախ ավելորդ զարդարանքներով ծանրաբեռնում են երգերը, թեպետ միշտ չէ, որ ի վիճակի են լինում հաղթահարել վոկալ տեխնիկայի իրենց իսկ առաջադրած բարդությունները*:

Ընդհանրապես Մարտունու շրջանում նկատելի է հակումը դեպի աշուղական երգերը: Այստեղ հասկանալի պատճառներով ավելի տարածված են մոտակա վայրերի աշուղների՝ Սազայու և Հրկեզի ստեղծագործությունները: Իհարկե, այստեղ, ինչպես ամենուրեք, Ջիվանու երգերը լայն տարածում ունեն, մինչդեռ Սայաթ-Նովայի երգերը 1970-ական թվականներին գրեթե նոր էին մտնում կենցաղի մեջ, այն էլ ռադիոյի միջոցով: Ժամանակակից գուսանների ստեղծագործություններից տարածված են Ծերամի, Հավասու, Ծահենի և Աշուտի երգերը:

Այս անվանի հեղինակների ստեղծագործությունների կողքին հնչում են նաև հայ աշուղական երգարվեստի ռճով հորինված բազմաթիվ տեղացի ստեղծագործողների երգերը:

Թեմատիկ առումով գերակշռում են սիրո երգերը, հատվածներ աշուղական սիրավեպերից և մանավանդ հայրենասիրական՝ այլաբանական կամ ուղղակի արտահայտչամիջոցներով ստեղծված հին ու նոր երգեր:

Աշուղական տիպի երգերում, ինչպես նաև ժողովրդական երգերում, հաճախ է կիրառվում քառյակի վերջին երկու տողերի կրկնության սկզբունքը: Այսպիսի դեպքերում մեղեդին կրկնվում է նույնությամբ, կամ տարբերակային փոփոխմամբ: Հաճախ կիսակադանային և վերջնական կադանաի ավարտական հնչյունները մեկը մյուսին հակադրվող ու լրացնող հենակետի իմաստ են ստանում և դրանով հարստացնում երգը: Այդ կրկնությունները կրկներգային գործառնություն ունեն և երգի ընթացքում ստեղծում են պարբերականության մի որոշակի բաբախում, հակադրվելով նախադասության սկզբում իմպրովիզացիոն բնույթի շարադրանքին:

Մարտունու շրջանի գյուղերում ինչպես շարքային, այնպես էլ ավելի հմուտ երգողների կատարման ընթացքում նկատելի է երգի

* Այդ մասին տես՝ «Հայ գեղջուկ երաժշտությունը» հոդվածը Կոմիտասի «Հողվածներ և ուսումնասիրություններ» աշխատության մեջ, Երևան, 1941, էջ 17:

մեղեդու ձևավորման ու զարգացման ուղին: Այլ կերպ ասած, երգը, որը քաջ ծանոթ է և՛ երգողին, և՛ ունկնդրողներին, հետզհետե բյուրեղանում է, ընդունելով իր վերջնական մեղեդիական, դիֆուզիան և հուզական կերպարը: Այստեղ ևս հաստատվում է այն, որ ժողովրդական երգարվեստը մի միասնական գործընթաց է, որի մեջ զուգորդվում են կատարողական և ստեղծագործական ֆունկցիաները: Ավելորդ չէ նշել, որ երգողը հանրածանոթ երգը կատարելիս, իր և միջավայրի տրամադրությանը համապատասխան, «խմբագրում» և երանգավորում է երգը, ընդգծելով տվյալ պահին առավել համապատասխանող հուզական կողմերը և ընդհակառակը՝ մեղմացնելով, մթազնելով երկրորդականները:

Բնականաբար, երգի կատարման ընթացքին զուգահեռ ծավալվող այս խմբագրական կամ ստեղծագործական պրոցեսը կատարվում է ինքնաբերիկ և չգիտակցված: Այդպիսի մոտեցումը ժողովրդական երգարվեստի մեծ առավելությունն է, նրա անկրկնելի գեղեցկության ու հմայքի պայմանը, գեղարվեստական արժանիքների գլխավոր չափանիշը: Ժողովրդական երգարվեստի այս յուրահատուկ շարժունակության (բայց ոչ հեղհեղուկ վիճակի) շնորհիվ է, որ յուրաքանչյուր անգամ կատարվելիս երգը կարծես վերստին ապրում է իր ստեղծման պրոցեսը, ծնվում նորից, վերստին հայտնությունն դառնալով թե՛ երգողի և թե՛ ունկնդրի համար: Այս անվերջ ստեղծագործական-կատարողական միասնական պրոցեսի շնորհիվ ժողովրդական երգը միշտ ունենում է բազմաթիվ տարբերակներ, որոնցից լավագույնները ժամանակի ընթացքում բյուրեղանում, կայունանում են:

Ժողովրդական երգարվեստը ինքնաբերիկ պրոցես լինելով հանդերձ քառասյին վիճակում չի լինում երբեք և ունի իր բազմաթիվ օրինաչափությունների համակարգը, որի մեջ կա նաև երգի գեղարվեստական արժանիքների չափանիշների հասկացությունը:

Մարտունու շրջանի ժողովրդական երգարվեստի միջավայրում երգի գեղարվեստական արժանիքների չափանիշի հասկացությունը նկատելի է դառնում հենց երգի կատարման ընթացքում, երբ այն ստեղծագործաբար վերանայվում է «խմբագրելու» բարոյական թե՛ իրավունքի, և թե՛ պարտականության հիման վրա:

Ինչպես երգողները, այնպես և ունկնդրողները ենթագիտակցորեն պատկերացնում են երգի գեղարվեստական արժանիքների ընդունելի նվազագույնը: Եթե տվյալ մակարդակը նվազագույնից ցածր է, ապա երգողը, կարծես ինքնաբերաբար միջամտելու իրավունք է ստանում: Կատարողի այսպիսի միջամտությունը հիմնականում իրագործվում է

երգի երաժշտական արտահայտչական միջոցների՝ զարդարանքների ավելացման կամ վերացման, մեղեդու որոշ կիսակադանսային կամ կադանսային դարձվածքների, հնչյունների ընդգծման, որոշ տողերի կրկնության, երաժշտականացված բացականչությունների ներդրման և այլ հնարքների շնորհիվ: Ունկնդիրը այս ստեղծագործական միջամտումը հանդուրժում է, բայց երբ երգիչն իր կատարողական-ստեղծագործական թույլ հնարավորություններով ընդունված չափանիշից ցածր է իջեցնում երգի գեղարվեստական մակարդակը, իսկույն արտահայտում է իր անաչառ վերաբերմունքը:

Վերջին հաշվով, որքան բարձր է երգի գեղարվեստական մակարդակը, այնքանով այն անձեռնմխելի է կատարողների քմահաճ տարբերակումների առումով և, ընդհակառակը, որքան ցածր է երգի գեղարվեստական մակարդակը, այնքան ավելի մեծ է միջամտման անհրաժեշտությունը, ուստի ավելի շատ ու բազմազան են տվյալ երգի տարբերակները:

ԵՐԳԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆ

Մարտունու շրջանի ներկայիս ժողովրդական երգարվեստի ամենացայտուն և նկատելի երևույթն անկասկած երգաստեղծության պրոցեսի լայն տարածումն է:

Գրեթե բոլոր գյուղերում կան մարդիկ, որոնք իրենց գուսաններ, աշուղներ չհամարելով հանդերձ, երգում են իրենց հորինած երգերը (որոշ դեպքերում մի քանի տասնյակից ավելի): Պիտի մշել, որ բանահավաքչական մեր բազմամյա աշխատանքի ընթացքում ստեղծագործական .նման ակտիվություն չենք նկատել մեր հանրապետության որևէ այլ վայրում: Ի սկզբանե ընդունված է, որ ժողովրդական երգարվեստը, որպես հասարակության գիտակցության արտահայտման ձևերից մեկը, կենդանի պրոցես է, որի մեջ ժառանգված, ընտրված ու բյուրեղացած երգերի կողքին ստեղծվում ու երգվում են նաև նորերը՝ ստեղծված կյանքի նոր պայմանների թելադրանքով: Ժողովրդական երգի ստեղծման ընթացքում ավանդական արտահայտչամիջոցները և ձևերը կարող են նորովի կիրառվել և մեկնաբանվել ու դրանով նոր երգերի կամ նույնիսկ նոր երգային ձևերի երևան գալու առիթ դառնալ:

Նորաստեղծ երգերին դեռ սպասում է համաժողովրդական ճանաչման, տարածման երկար ճանապարհը: Համեմայն դեպս, նոր երգերն ունեն արդիականության և հրատապության առավելությունը:

Չմոռանանք, որ կենսական անհրաժեշտության հարցը կարևոր է, անշուշտ, և հին երգերի համար: Նույնիսկ հնում ամենասիրված, բայց այժմ ժամանակավրեպ երգն էլ, վերջին հաշվով, դատապարտված է մոռացության:

Ժողովրդական երգարվեստի ստեղծագործական տարրը մնում է աննկատ թե՛ հեղինակի (որը լրիվ զուրկ է հեղինակային փառամոլությունից) և թե՛ ունկնդրի համար: Երկու կողմերն էլ ընկալում են այդ գործողությունն իբրև ինչ-որ ինքնըստինքյան հասկանալի երևույթ: Երգի ստեղծումը, կարելի է ասել, պարծանքի առիթ է դառնում ոչ թե մի անհատի, այլ ամբողջ միջավայրի համար: Հեղինակը հասարակական գովեստի է արժանանում միայն իբրև լավ կատարող: Երգ հորինելը չի ընկալվում իբրև առավելություն: Եվ դա հասկանալի է: Երգ ստեղծողը հանդես է գալիս որպես կատարող, որը պետք եղած ժամանակ չգտնելով իրեն ծանոթ հին երգերի մեջ գոնե մոտավորապես հարմար մի բան, հորինում է նորը: Ներքին անհրաժեշտությունն զգալով, ստեղծարար ձիրքով օժտված մարդիկ սկսում են աստիճանաբար ավելի ու ավելի անկաշկանդ ու համարձակ երգեր հորինել, մեկ-մեկ նույնիսկ հանպատրաստի:

Նորաստեղծ երգերի երաժշտական մարմնավորումն իրագործվում է ավանդական արտահայտչամիջոցների առավել կամ նվազ ստեղծագործաբար օգտագործմամբ, թե հանրահայտ մեղեդիների ամբողջական կիրառումից* և թե ծանոթ ինտոնացիոն դարձվածքների ու կառուցվածքային ձևերի նոր համադրություններից, ընդհուպ մինչև բոլորովին նոր և ինքնուրույն մեղեդիների ստեղծումը: Կարևորն այն է, որ բոլոր դեպքերում, բացառյալ հազվադեպ և պատահական շեղումները, նորաստեղծ երգերի մեղեդիները դուրս չեն գալիս հայ ժողովրդական երաժշտության ձայնակարգային և մետրատիթմիկ նախասիրված օրինաչափությունների հարազատ ոլորտից: Ըստ որում նախապատվությունը տրվում է առաջին հերթին և մեծ մասամբ հայ աշուղական երգարվեստին յուրահատուկ ոճական ուղղությանը, համեմատաբար նվազ՝ հայ գեղջկական երգերին, հատկապես պարերգերին և ավելի հազվադեպ՝ քաղաքային ոճին: Այլ ժողովուրդների երաժշտական կառույցների, ոճական տարրերի մենք չենք հանդիպել:

* Երգերի հեղինակները տալիս են այն բացատրությունը, որ երգերը ներկայացնելու այսպիսի միջոցը հաճախ նպաստում է արագ և լայն տարածմանը, մասամբ այս կատարվում է ունկնդիրների խնդրանքով ծանոթ, բայց քիչ երգվող մեղեդիների վերստին երաժշտական կենցաղ վերադարձնելու միտումով:

Արտահայտչամիջոցների ընտրությանն պահին պակաս կարևոր դեր չեն խաղում հեղինակի կամ կատարողի օժտվածության չափը և երգի հասարակական նշանակությունը: Վերջինիս առկայության դեպքում երգը կատարվում է տարբեր ռեզիոններում տարբեր ձևով, որովհետև ամեն մի կատարող այն ներկայացնում է յուր տարբերակով: Օստ հաճախ նոր երգը, տարածվելով, անցնում է իր այսպես կոչված բյուրեղացման ընթացքը: Այդ միջոցին բաց են թողնվում հեղինակի ներդրած անձնական երանգները, համահարթվում են անհատական ստեղծագործությանը բնորոշ գծերը և ընդգծվում են կոլեկտիվ ստեղծագործության հատկանիշները: Քիչ չեն նաև դեպքերը, երբ հեղինակի հարմարեցրած մեղեդին գտնվում է դեռ հեղհեղուկ, անավարտ վիճակում: Այդ երգերը կատարում են միայն իրենց հեղինակները և չունեն հասարակական նշանակություն, գտնվելով ստեղծագործական ընթացքի նախնական փուլում: Ներկա ժողովածուի էջերում ներկայացված մեծ օրինակները բերված են հատկապես այդ փուլը ցուցադրելու նպատակով:

ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՂ ՆԵՐՔ

Մարտունու շրջանի ժողովրդական երգարվեստում նկատվող ստեղծագործական ընթացքի ակնառու յուրահատկություններից է բազմազանությունը: Երգերի հեղինակներից յուրաքանչյուրը ունի իր մտածելակերպը, յուրովի է ընկալում ու կիրառում երգարվեստի՝ խոսքի և երաժշտության, արտահայտչականության տարբեր միջոցները և, վերջին հաշվով, ստեղծում իր անհատական ոճը՝ հարազատ մնալով հայկական ժողովրդական երգարվեստի սույն միջավայրում ընդունված գեղագիտական և հուզական սկզբունքներին, ինչպես նաև թեմատիկ և ոճամա-հնտոնացիոն ոլորտին: Ստեղծագործական այս տարբեր ոճերի առկայությունը յուրաքանչյուր հեղինակի անհատականության արտահայտությունն է և արտացոլվում է իր ստեղծագործության մեջ: Անշուշտ դժվար է բաժանել ստեղծագործողներին բուն ժողովրդականի և պրոֆեսիոնալի (սովյալ դեպքում գուսանների), սակայն փորձենք կատարել որոշ դասակարգում:

Հեղինակների ամենալայն շերտը (մեծ մասամբ իրենք էլ լինում են երգերի կատարողները) կազմում են նրանք, ովքեր իրենց երգերում վերարտադրում են իրենց կյանքի զանազան և արտասովոր դիպվածները:

Երկրորդ խմբին են դասվում նրանք, ովքեր իրենց երգերում կարողանում են անձնական-կենսագրական հարցերից բարձրանալ իրենց գյուղի կամ շրջանի չափանիշով հասարակական-բարոյական արժեք ունեցող հարցերի մակարդակին:

Երրորդ խումբը՝ դա ամենաբարձր մակարդակի ստեղծագործողներն են, որոնք իրենց երգերում շոշափում են համազգային նշանակություն ունեցող թեմաներ: Այսպիսի երգերի հեղինակներն, առանց կտրվելու իրենց առօրյա միջավայրից ու իրականությունից, կարողանում են վերացական պատկերների միջոցով հասնել լայն ընդհանրացումների: Իրենց ստեղծագործության գեղարվեստական արժեքով ու բեղմնավորությամբ այսպիսի հեղինակներն ըստ էության արդեն գտնվում են գուսանական երգարվեստի մակարդակի վրա, իհարկե այն կարևոր տարբերությամբ, որ երգարվեստը նրանց հիմնական զբաղմունքը չէ և չեն տիրապետում որևէ նվագարանի:

Այդպիսի ստեղծագործողներից մեկը Մարտունու շրջանի Ջորագյուղի միջնակարգ դպրոցի ուսուցիչ Հայրիկ Ղազարյանն է: Նա հարյուրավոր երգերի հեղինակ է, և ինքն էլ հանդիսանում է իր երգերի կատարողը: Նրա երգերից շատերը լայն տարածում են գտել նաև Հայաստանի այլ շրջաններում: Հայրիկ Ղազարյանի ստեղծագործության մեջ, կարելի է ասել, շարունակում է հայ աշուղագուսանական սինկրետիկ երգարվեստի ավանդույթը՝ մի անձնավորության մեջ բանաստեղծի, երգահանի և երգիչ-կատարողի օժտվածության միավորումը: Հայրիկ Ղազարյանի երգերի թեմատիկան բազմազան է՝ խրատական, երգիծական, քնարական և նշանակալից չափով հայրենասիրական: Հայրենասիրության գաղափարը արտահայտվում է մերթ պատկերական հայրենիքի գովքով, մերթ՝ պատմական դեպքերի վերհուշի ձևով, մերթ՝ հայ արժանավոր գործիչների՝ Կոմիտասի, Պարույր Սևակի և այլոց անձն ու գործը մեծարելու ձևով:

Իր հորինած երգերի երաժշտական մարմնավորման համար Հայրիկ Ղազարյանը հաճախ դիմում է թե՛ հայկական ժողովրդական քնարական երգերի լայնաշունչ ինտոնացիաներին, թե՛ աշուղական ասերգային երգարվեստի և թե՛ հայկական ժողովրդական շուրջպարերի, ինչպես նաև հայրենասիրական երգերին յուրահատուկ դիթամա-ինտոնացիաներին:

Հազվադեպ պատահող, ստեղծագործական կայուն համագործակցության արդյունք են Աստղաձոր գյուղի բնակիչներ Մացակ Գևորգյանի և Գառնիկ Հայրապետյանի հորինած երգերը: Սուաշինը օժտված լինելով նկատելի դիտողականությամբ, հիմնվելով շրջապատի բնության պատկերների, հասարակական կամ անձնական

29048
A 84066

կյանքի կոնկրետ դիպվածների վրա, հորինում է երգերի բանաստեղծական տեքստերը և սովորականի մեծ վերջին քառյակում նշում իր անունը: Երկրորդը՝ հիմնվելով հայ աշուղական երգերի ինտոնացիոն և ռիթմիկ դարձվածքների, ինչպես նաև կառուցվածքային ձևերի վրա, յուրաքանչյուր երգի համար ստեղծում է նոր և հետաքրքիր մեղեդի և ինքն էլ որոշակի հղկվածությամբ երգելով, երգը տարածում է համազուտույցների միջավայրում:

Այս համագործակցությամբ հորինված երգերում ամեն ինչ ասված է անմնացորդ. երգիծականը՝ սրությամբ, բնապաշտականը՝ պատկերավորությամբ, քնարականը կրքոտությամբ, ըստ որում միշտ էլ նկատելի է խոսքի ու մեղեդու միասնությունը: Նկատենք, որ այս համագործակցությունը հիշեցնում է ժողովրդական երգարվեստի ստեղծագործական կոլեկտիվ էությունը, որի առկայության պայմաններում հեղինակային նախանձախնդրությունը անհնար է:


Մարտունու շրջանի ժողովրդական երգարվեստի ստեղծագործական պրոցեսին զգալի մասնակցություն են ցուցաբերել նաև Ամրահ Ենոքյանը և Գառնիկ Ազիզյանը: Դժբախտաբար երկուսն էլ արդեն կենդանի չէին, բայց մեզ պատմեցին նրանց մասին, իսկ երգերը երգեցին նրանց ժառանգները: Ամրահ Ենոքյանի հորինած երգերը հազեցված են հուզականությամբ և բնապաշտական պատկերներով: Մեղեդիները հիշեցնում են հայ աշուղական և քաղաքային երգերը: Գառնիկ Ազիզյանի երգերը, սակայն, լի են կենսուրախությամբ: Արժարծելով կյանքի և աշխատանքի առօրյա երևույթները, նա հաճախակի առավելություն է տալիս դեպքերի զավեշտական կողմին, նրա երգերի երաժշտական ոճը ևս մոտ է աշուղականին:

Հիշատակման են արժանի իբրև ստեղծագործողներ նաև Պատվական Նազարյանը և Լևոն Բողոյանը, որոնց երգերում նկատվում է առավել մոտիկությունը հայ ժողովրդական երգարվեստի ավանդույթներին:

* * *

Ժողովածուի էջերում ներկայացված երգերը մենք դասակարգել ենք ըստ նրանց գործածական-կիրառական նշանակությանը ժողովրդի երաժշտական առօրյայում:

Այդպիսով, երգերը խմբավորել ենք մի քանի փոքր բաժիններում: Սակայն, ինչպես դա հաճախ է լինում, երգերից շատերի գործածական-կիրառական ֆունկցիաները միանշանակ չեն: Հատկապես



դա վերաբերում է պարերգերին, որոնք, իբրև երգարվեստի հնագույն ձև, ինչ-որ չափով պահպանել են իրենց նախնական սինկրետիզմը և դրանից բխող բազմաֆունկցիոնալությունը: Այսպես, որևէ երգ կարող է լինել թե՛ հարսանեկան և թե՛ հանդես գալ իբրև սովորական պարերգ: Մի այլ դեպքում երգը նախկինում լինելով աշուղական, հետո դարձել է պարերգ: Որոշ դեպքերում, անկախ երգի երաժշտական հատկանիշների կամ օգտագործման հանգամանքների, նա կարող է զետեղված լինել թե՛ ժողովրդական ձոներգերի և թե՛ հեղինակային երգերի շարքում: Կիրառական մի քանի ֆունկցիա ունեցող երգերի մասին համապատասխան նշումներ ենք արել ծանոթագրություններում:

Առաջին բաժնում զետեղել ենք մարդկային կյանքում, ըստ մեզ, ամենաէական նշանակություն ունեցող երգերը՝ օրորոցայինները և աշխատանքային երգերը: Մարտունու շրջանում օրորոցային երգերը կոչվում են **լուրիներ**, **լուրիկներ** կամ **այերներ**, **այրեներ**: Ժողովածուի էջերում ներկայացված օրորոցայինները, ինչպես նաև երեխա խաղացնելու երգի օրինակը հիմնականում կառուցված են օրորոցայիններին հատուկ փաղաքշող ձայնարկությունների հիման վրա և չունեն որևէ սյուժե: Սյուժեն նմանապես բացակայում է նաև ժողովածուի աշխատանքային երգերում: Կարծում ենք, որ գործնական ֆունկցիա ունեցող երգերում սյուժետային ներդրումներ չօգտագործելու սկզբունքը բնորոշ է սովյալ ռեգիոնի երգարվեստի համար:

Ժողովածուի երկրորդ բաժնում մենք զետեղել ենք ծիսական երգերը՝ «ավետիսներ» կամ ինչպես այստեղ ընդունված է ասել «ալելուներ», կապված Քրիստոսի Ծննդյան տոնի հետ, վիճակի երգի մեկ օրինակ և մի քանի երգ ու պար, կապված հարսանեկան ծիսակատարության հետ: Պետք է նշել, որ Մարտունու շրջանում «ավետիսներ» երգելու սովորույթը քիչ է պահպանվել: Մեր ձայնագրած օրինակներից երկուսն էլ (10, 11) ուշագրավ են իրենց ոճով և ամբողջականությամբ, հիմնավորք բույրով և, հետաքրքիր է, որ հեռու են եկեղեցական ոճից և լիովին կերտված են աշխարհիկ մտածողությամբ:

Նկատի ունենալով, որ պարերգերում իշխում է սիրո թեման, իսկ սիրո երգերում՝ պարայնության տարրը, բոլոր այդ տիպի երգերը խմբավորել ենք միասին՝ երրորդ բաժնում: Այս երգերը լի են հուզականությամբ, երգերի մեջ կան կենսուրախ և կատակային բնույթի երգեր, պատահում են նաև սոցիալական անհավասարության դեմ ուղղված նմուշներ:

Չորրորդ բաժնում զետեղված են պատմական երգերն ու ձոներգերը (հիմներ): Այս երգերը մեծամասնությամբ բուն ժողովրդական են, իսկ մի քանիսը, թեպետ հեղինակ ունեն և աշուղական են, մոտ են ժողովրդական ոճին:

Հինգերորդ բաժնում տեղ են գտել աշուղական երգերը և աշուղական սիրավեպերից մի քանի հատված:

Ժողովածուի վերջին՝ վեցերորդ բաժնում զետեղել ենք հեղինակային երգերը: Դրանցից շատերը կարող էին ներկայացված լինել նաև նախորդ բաժիններից որևէ մեկում, բայց Մարտունու շրջանի երգաստեղծության պրոցեսն ավելի ցայտուն ներկայացնելու միտումով հեղինակային երգերը խմբավորել ենք իբրև առանձին բաժին:

Երգերի մեղեդիները բավականաչափ հարուստ և բազմազան են ըստ իրենց ձայնաձավալի, ձայնակարգի, զարդարանքների, մետրադիֆունկցիան, կառուցվածքային ձևերի և այլ առանձնահատկությունների:

Ձայնաձավալի առումով ժողովածուում զետեղված երգերը ընդգրկում են մեծ սեկունդայի սահմաններում ծավալվող դիստորդից մինչև մեծ տրիտայի ծավալ ունեցող օրինակներ:

Նոտաների շարվածքը կատարվել է համակարգիչի միջոցով, որի անսպառ հնարավորությունների կողքին կան նաև անհարմարություններ: Օրինակ՝ չափահարի ցուցմունքները բոլոր դեպքերում մեկ քառորդ է, բայց իրականում այն հարկավոր է հասկանալ որպես տվյալ երգի չափի միավոր:

Վերջում բերված են այբբենական տախտակներ:

ՕՐՈՐՈՑԱՅԻՆ ԵՎ ԱԾԽԱՏԱՆՔԱՅԻՆ
ԵՐԳԵՐ

1 Լուրիկ

♩. 84 Moderato



Լու- ռիկ է- նեմ, լու- ռիկ,
Դար- դար ա- նեմ, լու- ռիկ,
Ա- յեր, ա- յեր, ա- յեր,



Ա- յեր է- նեմ օ- ռո- ռո- ցիմ,



Դար- դար է- նեմ օ- ռո- ռո- ցիմ
Քուն տը- վել եմ գըր- կա- նո- ցիմ,



Ա- յեր է- նեմ, ա- յեր,
Ա- յեր, ա- յեր, ա- յեր:

Լուրիկ էնեմ, լուրիկ,
Դարդար աճեմ, լուրիկ,
Այեր, այեր, այեր,
Այեր էճեմ օրորոցիմ,
Դարդար էճեմ օրորոցիմ,
Դարդար էճեմ օրորոցիմ,
Քուն տվել եմ գրկամոցիմ,
Քուն տվել եմ գրկամոցիմ,
Այեր էճեմ, այեր,
Այեր, այեր, այեր:

Այեր, այեր, այեր, այեր:

The musical notation consists of a single staff with a treble clef and a key signature of three sharps (F#, C#, G#). The piece is divided into four measures, each with a 4/8 time signature. The notes are: G4 (quarter), A4 (quarter), B4 (quarter), G4 (quarter) in the first measure; G4 (quarter), A4 (quarter), B4 (quarter), G4 (quarter) in the second measure; G4 (quarter), A4 (quarter), B4 (quarter), G4 (quarter) in the third measure; and G4 (quarter), A4 (quarter), B4 (quarter), G4 (quarter) in the fourth measure.

Լուրի, լուրի, լուրի, լուրի
 Բալա, լուրի, լուրի,
 Լուրիկ էմեմ, բալես քնի, լուրի,
 Լուրի, լուրի, բալա,
 Այեր, այեր, այեր, այեր, այեր,
 Բալա, այեր էմեմ,
 Այեր էմեմ, գառս քնի,
 Այեր, այեր, այեր, այեր, այեր:



Այրե,
Լուրու, լուրու, լուրու,
Լուրի բալա ջան, լուրի, լուրի,
Լու-լու, լու-լու, լու-լու,
Այեր էնես, գառան այեր էնես:
Լուրի, բալա ջան,
Լուրու, լուլու, լուրու, լու,
Լուրիկ, գառ ջան, լուրիկ:

4 Այեր

♩. 96 Moderato un poco animato



Ա- յեր է- գիմ, ա- յեր է- գիմ,



Ա- յեր է- գիմ քա- լի- կիս,



Դար- դար է- գիմ, դար- դար է- գիմ,



Դար- դար է- գիմ Գառ- գի- կիս:



Օ- ռո- ռո- ցի քուն մա- մուշ ա,



Օ- ռո- ռո- ցի քուն մա- մուշ ա,



Օր, օր, օր ջան, օ- ռո- ռո- ցի,



Այեր էնիմ, այեր էնիմ,
Այեր էնիմ բալիկիս,
Դարդար էնիմ, դարդար էնիմ,
Դարդար էնիմ Գառնիկիս:
Օրորոցի քունն անուշ ա,
Օրորոցի քունն անուշ ա,
Օր, օր, օր ջան, օրորոցի,
Օրորոցի քունն անուշ ա:

5 Երեխա խաղացնելու երգ

♩. 112 Allegretto giocoso



Նա - րա նա, նա - րա նա,



Տար- նա, նա- նա, նա, նա, նա,



Նա- րա, նա - նա, նա- նա նա- նա:



Նա- րա, աի- նա, աի նար նա,



Նա- նա- նա, նա, նա- նա- նա,



Նա- նա, աի, նա, աի- նար, նա,



Նա- նա, աի- նա, աի- նա, աի- նա,

Sա- րա. նայ, Գի նայ, նայ:

parlando
Ջան, ջի- գյար ջան, ջան, ջան,

Ջի- գար ջան, ջի- վան ջան:

Նա րա նա, նա րա նայ,
 Տար նա, նա նայ, նա, նա, նայ,
 Նա րայ, նա նայ, նա նայ նա նայ,
 Նա րա, նա, Գի նայ, Գի նար, նայ,
 Նայ նա նայ, նա, նա նա նայ,
 Նա նա, Գի, նայ, Գի նար, նայ,
 Նա նա, Գի նայ, Գի նայ, Գի նայ,
 Տա րա նայ, Գի նայ, նայ:
 Ջան, ջիգյար ջան, ջան, ջան,
 Ջիգար ջան, ջիվան ջան:

6 Կով կրթելու

♩. 84 Sostenuto



Դա- լե, դա- լե, դա-լե, դա- լե, դա- լե, դա- լե, դա- լե, դա- լե, դա- լե,



Դա- լե, դա- լե, դա- լե, հո, հո, հո, դա- լե, դաճ-լե, հո, հո,



Հո, դա- լե, դա- լե; դա- լե:

Դալե, դալե, դալե, դալե,
 Դալե, դալե, դալե, դալե,
 Դալե, դալե, դալե, հո, հո, հո,
 Դալե, դալե, հո, հո, հո,
 Դալե, դալե, դալե:

7 Կալի երգ

№ 104 Moderato

Դե յա, յա, յա, յա, յա, յա,

Ե- զո ջան, ա- ռի, ա- ռի,

Ջո- դար ջան, ա- ռի,

Է- լե յա- ման, երբ կու- գա ձու- ան,

իս Ծա- դիկ քե- րեմ տու- ան,

Ա- ռի Ջո- դար ջան, էլ, ա,


Դե յա, յա, յա, յա,



Տե- նաս մեր հա- լը.



Կարկուտ չը- գա տա- նա մեր կա- լը.



Ա- րի', Ջոդար ջա'ն, ա-րի', ա- րի':

Դ-ե յա, յա, յա, յա, յա, յա,
Եզո ջան, արի, արի,
Ջոդար ջան, արի,
Էլե յաման, երբ կուգա ձունը,
Իմ Ծաղիկ բերեմ տունը,
Արի, Ջոդա ջան, էյ, ա,
Դ-ե յա, յա, յա, յա,
Տենաս մեր հալը,
Կարկուտ չգա տանա մեր կալը.
Արի', Ջոդար ջա'ն, արի', արի':

8 Սայլի երգ

Ն. 108 Allegretto



Այս, ե-լավ, ե-լավ, բա-լա ջան, ե-լավ,



Ել տոր եզ ջան, ե-լավ, ե-լար,



Ել, ել, ել, ել, ել, ել,



Ել, ել, ել, ել, ել, ել, ել, ել.



Ել, ջեյ-րան ջան, ջան, Բո-խար ջան,



Ջան ել, ել, ել, ել, ել, ել, ը-հը:

Այս, ելավ, ելավ, բալա ջան, ելավ,
 Ել տոր եզ ջան, ելավ, ելար,
 Ել, ել, ել, ել, ել, ել,
 Ել, ել, ել, ել, ել, ել, ել,
 Ել, ջեյրան ջան, ջան, Բոխար ջան,
 Ջան, ել, ել, ել, ել, ել, ել, ը-հը:

9 Հովվական

♩. 70 Comodo

The musical score consists of five staves of music in the key of D major (two sharps) and 2/4 time. The tempo is marked '♩. 70 Comodo'. The melody begins with a quarter note D4, followed by eighth notes E4, F#4, G4, A4, B4, C5, and D5. The second staff features a sextuplet of eighth notes (D4, E4, F#4, G4, A4, B4) and a quarter note C5. The third staff contains two triplet eighth notes (D4, E4, F#4) and a quarter note G4. The fourth staff continues with eighth notes (A4, B4, C5, D5) and quarter notes (E4, F#4, G4, A4). The fifth staff concludes with eighth notes (B4, C5, D5) and a quarter note E4.

ԾԻՍԱԿԱՆ ԵՎ ՀԱՐՍԱՆԵԿԱՆ
ԵՐԳԵՐ ՈՒ ՊԱՐԵՐ

10 . Ավետիք

♩. 76 Comodo

1. 2.



Քը-րիս-տոն-յա՛յք, ար-թուն մա-ցեք, ար-թուն մա-ցեք,

1. 2.



Մեզ քեզ ա-վե-տիք, ա-վե-տիք:

Քրիստոնյայք, արթուն մացեք,
Քրիստոնյայք, արթուն մացեք,
Մեզ քեզ ավետիք,
Մեզ քեզ ավետիք:

11 Ալելուի

J. 106 Moderato con anima



Ա- լե- լու , ա- լե- լու,



Մայրամ ե-լավ դուռ-նու ե- լին, Չոքավ, բն-րնց Քրիստոս որ-դին,



Բուրդ խամ-ձա-րուր փա-թու-թե-ցին, Գետ վարդա-նեմ մը-կըր-տեց-ին:



Ա- լե- լու , ա- լե- լու, ա- լե- լու- յա,



Մեզ ու ձեզ մեծ ա-վե-տիս, մեծ ա-վե- տիք:



Քրիստոս ծը- ցավ և հայտ-նե-ցավ Օրթո-ճալլ-ու-թյուն Քրիստոս-սին:



Մեզ ու ձեզ մեծ ա-վե-տիք, մեծ ա- վե տիք:

Ա- լե- լու, ա- լե- լու- լա:

Ա- լե- լու- լա, ա- լե- լու, ա- լե- լու- լա,

Ա- լե- լու, ձեր տղի ա- մում ի՞նչ ա: Ա- վե-տիք ա:

Ա-վե-տիք հե-ծավ փո-լադ բու-ռակ, Բըռ-չամ թո-ղեց բու- ռակ, բու-րակ,

Մեջ- քից գար- ցեց պող- պատ ու- թագ,

Ա- վե- տի- քից կեր գո- մով ող- չար,

Գո-մով ողջ- թի բուրդ-հար-բու-շում, Փե-տեր վը-րեց ըն-տըր- վե- լի,
Հետ-մել վը-րեց դե-ղից թա-գիկ,
Հող մի վը-րեց սուս մար-գաբիտ:

Ա- լե- լու, ա- լե- լու- լա:

12 Ալեկույա

♩. 120 Allegretto animato

Յըն-ծա- ցեք, շու- րա-խա-ցեք, ա- լե- լու- յա,

Ըս- օր ծը-նունդ Մայ-րա-մին ա, ա- լե- լու- յա,

Մայ-րամ զը-նաց դուռ-նը վե-րին, ա- լե- լու- յա,

Չըղ-տավ, բե-րավ յոր խաչ որ-դին, ա- լե- լու- յա:

Un poco piu mosso e marcato

Խաչ որ-դին, Քրիս-տոս որ-դին, ա- լե- լու- յա,

Ան-բազ-մու-թյուն մը-կըր-տե-ցին, ա- լե- լու- յա,

Շիշ ե-րե-րաց օ-րո-րո-ցին, ա- լե- լու- յա.

Բուրդ խան-ձա-րուր փա- թա- թե- ցիմ, ա- լե- լու- յա:

Quasi parlando un poco mosso

Բա- րի, բա- րի, ձեր տղու ա- նուն ի՞նչ ա,

Հով- հան- ան:

tempo primo

Հով-հան-ան հե-ծավ փո-լադ քու-ռակ, ա- լե- լու- յա,

Մեջ- քիմ զար- նա պող-պատ ու-րագ, ա-լե- լու- յա,

47 Հով-հան-ան սին ու-նի գու-թան,գո-մեջ,տրակ-տոր, ա- լե- լու- յա:

Սու- րուն օղ- լը- թի պը- նեղ ու- կի,



Յնծացեք, ուրախացեք, ալելույա,
Ըսօր ծնունդ Մայրամիհն ա, ալելույա,
Մայրամ գնաց դուռնը վերին, ալելույա,
Չըղտավ, բերավ լուր խաչ որդին, ալելույա:
Խաչ Որդին, Քրիստոս Որդին, ալելույա,
Անբազմություն մկրտեցին, ալելույա,
Ծիշ երերաց օրորոցին, ալելույա,
Բուրդ խանձարուր փաթաթեցին, ալելույա:
Բարի, բարի, ձեր տղու անուն ի՞նչ ա,
Հովհաննես:
Հովհաննես հեծավ փուլադ քուռակ, ալելույա,
Մեքքին զարնա պողպատ ուրագ, ալելույա,
Հովհաննեսին ունի գութան, գոմեշ, տրակտոր, ալելույա:
Սուրուն օղչրի պճեղ ոսկի,
Գութան, գոմեշ, ոսկի, արծաթ:
Ալելույա, ալելույա, ալելույա, ալելույա:

13 Վիճակի երգ

J. 96 Allegretto



Վի- ճակ ա- սեմ ու շա- րեմ,



Ջան, գյու- լում, շան, շան,



Լը- ցեմ տոպ- բակ- մու կա- րեմ,



Ջան, ծա- դիկ, շան, շան:



Առ- մեմ ել- մեմ Կը- գըլ վանք,



Ջան, գյու- լում, շան, շան,



Բեկ- քե մե գյու- գալ ճա- րեմ,



Վիճակ ասեմ ու շարեմ,
 Ջան, գյուլում, ջան, ջան,
 Լըցիմ տոպրակն ու կարեմ,
 Ջան, ծաղիկ, ջան, ջան:

Առնեմ ելնեմ Կզըլ վանք,
 Ջան, գյուլում, ջան, ջան,
 Բելքե մե գյոզալ ճարեմ,
 Ջան, վիճակ, ջան, ջան:

Վարդ տնկի անդաստ քաղա,
 Ջան, գյուլում, ջան, ջան,
 Ծյուղ տվեց քաղապե քաղաք,
 Ջան, վիճակ, ջան, ջան:

Ամեն ծառից մեկ փշատ,
 Ջան, գյուլում, ջան, ջան,
 Դարիք աղբեր ումբր շատ,
 Ջան, ծաղիկ, ջան, ջան:

14 Որքան լավ է լինում սերը սոխակին

Ն. 116 Allegretto



Որ- քան լավ է լի-նում սե-րը սո-խա- կին



Սե-րը սո-խա- կին,



Որ- քան շուտ եմ հաս-նում .



սըր-տի փա-փա- գին .




Հար-սա-գի-քող, ըն-կեր, շըն-հա-վոր լի-նի,



կող-քիդ մըս-տող քա-վոր,



աչ-քող լույս լի-նի,



Որքան լավ է լինում սերը սոխակին,
Սերը սոխակին,
Որքան շուտ են հասնում արտի փափագին,
Որքան շուտ են հասնում արտի փափագին:

Հարսանիքդ, ընկեր, շընհավոր լինի,
Ծընհավոր լինի,
Կողքիդ անտող քավոր, աչքդ լույս լինի,
Կողքիդ անտող քավոր ջան, աչքդ լույս լինի:

Հագել ես ծիրանի, իսկ ընկերական,
Իսկ ընկերական
Երկու ծաղիկներն են սիրո պատվական,
Երկու ծաղիկներն են սիրո պատվական:

15 Մեր հանդերին լավ նայեցեք

♩. 96 Allegretto



Մեր հան-դե- ռին լավ նա-յե- ցեք,



Վարդ մա- նու-շակ- ներ քա- դե- ցեք,

Մեր հանդերին լավ նայեցեք,
Վարդ մանուշակներ քաղեցեք,
Տարեք ձեզ մոտ տարածեցեք,
Ազնի՛վ հյուրեր, բարով եկաք:

Գինու բաժակն էր հարգելի,
Թեկուզ ով որ կը վայելի,
Կվարտիրին առատ լինի,
Խմեք, ասեմ անուշ լինի:

Թամանդարից հրաման առա,
Ես ձեզ համար աշուղ դառա,
Ես մեկ աշուղ ձեզիկ ծառա,
Ազնի՛վ հյուրեր, բարով եկաք:

Եղոն եմ, ձեզ սիրեմ արդար,
Ընկերներին հետ հավասար,
Ո՛վ իմ ճշմարիտ բարեկամ,
Խմեք, ասեմ անուշ լինի:

Մեղեդին ընդգրկում է քանաստեղծական երկու տող և անփոփոխ կրկնվում մի անգ և վերջ: Քառյակի վերջին երկու տողը կրկնվում է:

16 Աստված սիրող, ականջ արեք, լսեցեք

♩. 84 Moderato



Աստ-ված սի-րող, ա-կանջ ա-րեք, լս-սե-ցեք,



Համ-դերձ-ան-րը գո-վա-թա-նես մեր հար-սին,



Ոս-կե-թել մա-զե-րը մի մեկ-մեկ հյու-սե-ցեք,



Զուտ գո-հա-րով ար-ժան կա-նես մեր հար-սին:



Ութ-սուն դա-հե-կան է ե-րե-սի քո-ղը,



Ին-նը-սուն դա-հե-կան է ա-կան-ջի օ-ղը,



Ոս-կի ճըտ-նոց հիմզ հա-զա-րին ար-ժո-ղը,



Ջուտ գո-հար է, ար-ժան կա-նես մեր հար- սին:

Աստված սիրող, ականջ արեք, լսեցեք,
Հանդերձները գովաբանես մեր հարսին,
Ոսկեթել մազերը մի մեկ-մեկ հյուսեցեք,
Ջուտ գոհարով արժան կանես մեր հարսին:



Ութսուն դահեկան է երեսի քողը,
Իննսուն դահեկան է ականջի օղը,
Ոսկի ճտնոց հինգ հազարին արժողը,
Ջուտ գոհար է, արժան կանես մեր հարսին:

Երգ ու տաղով հագուցանես շապիկը,
Վարդի տերևի մետաքսագործ կապիքը,
Վարդ կոշիկներ ընծայել է պապիկը,
Ընծայաբեր վարդարան է մեր հարսը:

Աղվանն եմ, միշտ պահապան եմ Օսանին,
Պարզաստուր բուրաստան եմ Օսանին,
Այսուհետև նոր հարս անես Օսանին,
Դեպի Հայաստանը տանես Օսանին:

17 Հարսանեկան մեղեդի

♩. 84 Moderato maestoso



18 Հարսանեկան մեղեդի

♩. 88 Moderato



18



19 Հարսանեկան պարեղանակ

♩. 112 Allegretto



ՊԱՐԵՐԳԵՐ ՈՒ ՍԻՐՈՒ ԵՐԳԵՐ

20 Հարրբան

♩. 88 Moderato



Հա- բըր- բան, ջա- նե ջան,



Հա- բըր- բա- մի ձո- րեմ եմ,
Ջոջ բա- դի խըմ- ձո- րըմ եմ,



Քա- միմ ե- կավ, թափ տը- վեց,



Վա- թա- նես մո- լոր- ված եմ:

Հարրբան, ջանե ջան,
Հարրբանի ձորեմ եմ,
Ջոջ բադի խնձորն եմ,
Քամին եկավ, թափ տվեց,
Վաթանես մոլորված եմ:
Քամին եկավ, թափ տվեց,
Վաթանես մոլորված եմ:

21 Հորրբան

Andantino



Հո- բըր- բան, շա- ան շան,



Կա- քավ կայ- ան գե- րա- ան,
Ու- կե բը- լով բե- րա- ան,



Կա- քավ շան, դեյ- թան գոր- ծա,



Յա- րիս չու- խի բե- րա- ան,



Հո- բըր- բան շա- ան շան,



Ջուր կի- գա բար- ձըր սա- րեան,
Կը- թա- փի մար- մար քա- րեան,



Յար- ան դար- ձե խը- րա- րե,



Վը-րեն թա-փի Տերն յա-րեն,

Հորրբան, ջանն ջան,
Կաքավ կայնն գերանին,
Ոսկն բլու բերանին,
Կաքավ կայնն գերանին,
Ոսկն բլու բերանին:

Կաքավ ջան, դեյթան գործա,
Յարիս չուխի բերանին,
Կաքավ ջան, դեյթան գործա,
Յարիս չուխի բերանին:

Հորրբան, ջանն ջան,
Ջուր կի գա բարձր սարեն,
Կթափի մարմար քարեն,
Ջուր կի գա բարձր սարեն,
Կթափի մարմար քարեն,
Յարն ա դարձն խրարե,
Վրեն թափի Տերն յարեն,
Յարն ա դարձն խրարե,
Վրեն թափի Տերն յարեն:

Հորրբան ջանն ջան,
Ջուր կի գա բարձր սարեն,
Կապուտ քուռակ մեջ խամին,
Ոտս դրեցի գլամին,
Ես սիրեր եմ ես կառնեմ,
Ի՞նչ պլտի էնա Վամին,
Ես սիրեր եմ ես կառնեմ,
Ի՞նչ պլտի էնա Վամին:

22 Լայլին սարովն անցավ

♩. 100 Allegretto



Լայ- լի-նը սա-րով-նան-ցավ, Լայ- լի ջան,



Լայ- լի, սի- ցին խըն- ձո- րով



լոց-վավ, Լայ- լի ջան Լայ- լի:



Լայ- լի-նը, Լայ- լի ջան, Լայ- լի, -



Լայ- լի ջան, Լայ- լի:

Լայլինը սարովն անցավ,
Լայլի ջան, Լայլի,
Սիցին խնձորով լցվավ,
Լայլի ջան Լայլի:

Կրկներգ.
Լայլինը, Լայլի ջան, Լայլի,
Լայլի ջան, Լայլի:

Լայլու ձորի ջովստ աղջիկ,
Լայլի ջան, Լայլի,
Ջխտի միգարն էր լաստիկ,
Լայլի ջան, Լայլի:

23 Վերին զաղեն արտ ունեն

♩. 88 Moderato



Վե- րին զա- ղեն արտ ու- նեն,



Ծա- տեր գի- տեն դարդ չու- նեն,



Դար- դըս ին- ձի տա- րել է,



Ջա- րել են, խա- բար չու- նեն:

23

Վերին զաղեն արտ ունեն,
 Ծատեր գիտեն դարդ չունեն,
 Դարդս ինձի տարել է,
 Ջարել են, խաբար չունեն:
 Դարդս ինձի տարել է,
 Ջարել են, խաբար չունեն:

24 Չայդան բերեք

♩. 82 Allegretto



Չայ- դան բե- րեք, չայ ա- նենք,



Հայ աա, աա, աա, աայ, աա, աա, աայ,



Մեր խըն- ջույ- քին փայ ա- նենք,




Նայ աա, աա, աայ, աա, աայ, աայ, աայ:

Չայդան բերեք, չայ աանենք,
 Հայ աա, աա, աա, աայ, աա, աա, աայ,
 Մեր խնջույքին փայ աանենք,
 Նայ աա, աա, աայ, աա, աայ, աայ, աայ:

25 Սարից եկավ երկու դոջ

♩. 60 Larghetto



Սա- րից ե- կավ եր կու դոջ,



Մ'եռ- անք քե- զիկ, Սա- տը- ված,
Մ'ե- կին կի- տաս, մե- կին՝ ոջ:



Տայ, նա- րա, նայ, նայ, նայ,



Նայ, նա- րա, նայ, նայ, նայ:

Սարից եկավ երկու դոջ,
[Մ'ինը փնջած, մինը ոջ,]
Մ'եռնիմ քեզիկ, Սատված,
Մ'եկին կիտաս, մեկին՝ ոջ:

Տայ, նա, րա, նայ, նայ, նայ, նայ,
Նայ, նա, րա, նայ, նայ, նայ, նայ:


Բոզ ձի մունեմ, նալուկ էր,
[Բոզ ձի մունեմ, նալուկ էր,]
Հերկեն թավլեն սալուկ էր,
[Հերկեն թավլեն սալուկ էր]:

Կրկներգ.
Սրեն առավ կանաչոց,
Կանաչի թփեր երեսնոց,
Դոջերո՞ք բաց գամ քու ծոց,
Խմժար իմ դարդեր ու խոց:

Նար օյ, նար օյ, նար օյ, ջան
Դալի դոլի լարո ջան:

26 Զուր պրծե կուգա սարեն


♩. 102 Moderato




Տա-րայ, Գայ, Գայ, Գայ, Գայ, Գայ,



Նայ, Գայ, Գայ, Գայ, Գայ, Գայ, Գայ,



Զուր պըր- ծե կու- գա սա- րե՛ն,



Կը- թա- փի մար- մար քա- րե՛ն,



Ով, որ դառ- Գա իր յա- րե՛ն,



Վը- րե՛ն թա- լա լավ յա- րե՛ն:

Տարայ, Գայ, Գայ, Գայ, Գայ, Գայ,
 Նայ, Գայ, Գայ, Գայ, Գայ, Գայ, Գայ,
 Զուր պրծե կուգա սարե՛ն,
 Կթափի մարմար քարե՛ն,
 Ով, որ դառնա իր յարե՛ն,
 Վրե՛ն թալա լավ յարե՛ն:

27 Չիճար


♩. 84 Moderato



Այս, ի ման չի-ճար, յա ման չի-ճար,
Դո՞ր ի գը-ճաց իմ սի-րուն յար,



Չի-ճար չի-ճար, չի-ճար, չի-ճար,
Յա-ման չի-ճար յա-ման, չի-ճար,



Աչ-քոս մը-ճաց ճա-ճա-պար--հիճ,³
Չի-ճա-րու սար բար-ձրիկ սա-րիճ,



Յա-ման չի-ճար, չի-ճար, չի-ճար,
Յա-ման չի-ճար, չի-ճար, չի-ճար:

Այս, ի ման չինար, յաման չինար,
Չինար, չինար, չինար, չինար,
Դ-ո՞ր ի գնաց իմ սիրուն յար,
Յաման չինար, յաման, չինար,
Աչքս մնաց ճանապարհին,
Յաման չինար, չինար, չինար,
Չինարու սար բարձրիկ սարին,
Յաման չինար, չինար, չինար,
Դ-որ ի գնաց իմ սիրուն յար,
Յաման չինար, յաման չինար:
Բերդի դռան կարմիր արյուն,
Յաման չինար, յաման չինար,
Ահա եկավ բարի գարուն,
Յաման չինար, չինար, չինար,
Աչքս մնաց իմ նշանլուն,
Յաման չինար, չինար, չինար,
Ասի երթանք հորդ բախչեն,
Յաման չինար, յաման չինար,
Ես վարդ քաղեմ, դու ալուջեն,
Յաման չինար, չինար, չինար,
Աչքս ընկավ սուլիդ փաչեն,
Իմ սիրուն յար, իմ դառն յար,
Սուլիդ նալչեն, սիրտս փառչեն,
Յաման չինար, յաման չինար,
Ես ու դու ենք իրարու յար,
Յաման չինար, յաման չինար:

Մ'եղեղին կազմված է երկու օղակից: Առաջին օղակով երգվել են 1-4, 11-14, 17-20, 23, 24 տողերը, երկրորդ օղակով՝ 5-10, 15, 16, 21, 22, 25, 26: 15-16, 21-22, 25-26 երկտողերը կրկնվում են:

28 Նար օյ

♩. 58 Larghetto



Մե- շու փե- տեր բե- բե- ցին,



Նար օյ, մար օյ, մար օյ ջան:



Յա- բիս դըռ- մով ան- ցու- ցին,



Նար օյ, մար օյ, մար օյ ջան:



Թուխ-թուխ աչ- բեր լա- ցու- ցին,
Թոճ- դիր վա- ոհ, կե- մա մուխ,



Դե- լի դո- լի յա- բո ջան,
Նար օյ, մար օյ, մար օյ ջան:

Մեշու փետեր բերեցին
Նար օյ, մար օյ, մար օյ ջան:
Յարիս դոճով անցուցին,
Նար օյ, մար օյ, մար օյ ջան:
Թուխ-թուխ աչբեր լացուցին,
Դելի դոլի յարո ջան:
Թոճդիր վառի, կեմա մուխ,
Նար օյ, մար օյ, մար օյ ջան:

29 Սարեն կելնի ջուխտակ մոլիս

J. 79 Moderato



Սա-րեն կել-նի ջուխ-տակ մոլիս,
 Մեկն ա խան-գար, մե-կը՝ ծոխ,
 Է-նենց մե տը-ղա առ-նեմ,
 Է-նենց մե յար եմ ա-ռե,



Սա-րեն կել-նի ջուխ-տակ մոլիս,
 Մեկ-նա խան-գար, մե-կը՝ ծոխ,
 Ինք-նա խամ-բար, բըռ-չամ՝ թոխ,
 Ինք-նա խամ-բար, բըռ-չամ՝ թոխ,



Տա-րի-րամ, աայ, աայ, աայ, աայ աա աայ



Նայ, աայ, աայ, աայ, աայ, աայ, աայ:

Սարեն կելնի ջուխտակ մոլիս,
 Սարեն կելնի ջուխտակ մոլիս,
 Մեկն ա խանգար, մեկը՝ ծոխ,
 Մեկն ա խանգար, մեկը՝ ծոխ,
 Էնենց մե տըղա առնեմ,
 Ինքն ա խամբար, բոչամ՝ թոխ,
 Էնենց մե յար եմ առե,
 Ինքն ա խամբար, բոչամ, թոխ:

Տարիբամ, աայ, աայ, աայ, աայ աա աայ
 Նայ, աայ, աայ, աայ, աայ, աայ, աայ:

30 Ես աղջիկ եմ, ալ կուգեմ

♩. 76 Moderato




Ես աղ- ջիկ եմ, ալ կու- գեմ,
Բա-րակ բո- յի շալ կու- գեմ,



Ե- բոր ե- կա քո հոր տուն,
Ու-կի կա- տա- թով կու- գեմ:




Սա-րեմ կել- լնի ջուխ-տակ մուխ,
Մեկ-նա խան-գար, մե- կը՝ ծուխ,



Է- նեց մի յար եմ նա- ինչ,



Ին- ըն խու- մար, բոռ- չամ թուխ:



Է- նեց մի յար եմ ջա- թել,



Ին- ըն խու- մար բոռ- չամ թուխ:

Ես աղջիկ եմ, ալ կուզեմ,
Բարակ բոյիս շալ կուզեմ,
Եբոր եկա քո հոր տուն,
Ոսկի կատարով կուզեմ:

Սարեն կելնի ջուխտակ մոլիս,
Մ'եկն ա խանգար, մեկը՝ ծովս,
Էնենց մի յար եմ ճարել,
Ինքը խումար, բոչամ թովս:


Քառյակների վերջին երկտողերը կրկնվում են:

31 Արաքս, ինձիկ ճանապարհ տոր

♩. 84 Moderato




Ե- կա քեզ- մից աճց- կե- նա- լով,




Ա-րաքս, ին-ձիկ ճա-նա-պար տոր, ճա-նա-պար տոր,



Հե- նա- ցել եմ տա- մից, տե- դից,



Ա-րաքս, ին-ձիկ ճա-նա-պարի տոր,



Ո-րո- նամ եմ այդ եր- կի- ռը,



Գե- տե- ռի սի- ջի ըն- տի- ռը,



Լը-սիր Ղա- ռի- թի խըն դի- ռը.



Ա- րաքս, ինձի ճա- ճա-պարհ տուր,



Այս եր- կի- ընն հին Հա- յաս-տան,



Նախ- նյաց մե- թոց հին օ- թե-վան,



ինձի ե- թեք ըս- պա- սող կա,



Ա- րաքս, ինձի ճա- ճա-պարհ տուր:

Եկա քեզնից անցկենալով,
Եկա քեզնից անցկենալով,
Արաքս, ինձիկ ճանապարհ տուր,
Արաքս, ինձիկ ճանապարհ տուր,
Հեռացել եմ տանից, տեղից,
Արաքս, ինձիկ ճանապարհ տուր,
Հեռացել եմ տանից, տեղից,
Արաքս, ինձիկ ճանապարհ տուր,
Ռոռնում եմ այդ երկիրը,
Գետերի միջի ընտիրը,
Ռոռնում եմ այս երկիրը,
Գետերի միջի ընտիրը,

Լսիր Ղարիբի խնդիրը,
Արաքս, ինձի ճանապարհ տուր,
Արաքս, ինձի ճանապարհ տուր,
Այս երկիրըն հին Հայաստան,
Նախնյաց մերոց հին օթևան,
Այս երկիրըն հին Հայաստան,
Նախնյաց մերոց հին օթևան:
Ինձի երեք ըսպասող կա,
Արաքս, ինձի ճանապարհ տուր,
Ինձի երեք ըսպասող կա,
Արաքս, ինձի ճանապարհ տուր:

32 Յորոր

♩. 80 Moderato

The musical score consists of seven staves of music in 3/8 time, with a key signature of two sharps (F# and C#). The tempo is marked 'Moderato' with a quarter note equal to 80 beats per minute. The notation includes various rhythmic values such as quarter notes, eighth notes, and dotted notes, along with rests and slurs. A fermata is present over a dotted quarter note in the second staff. The piece concludes with a double bar line at the end of the seventh staff.

33 Թողեցի սուլ, հագա կալոշ

J. 84 Agitato



Թո-ղե- ցի սուլ հա-գա կա-լոշ,



Թը-րի ե-լա վըր վը-րու դոշ:



Ավ-տոք ե-կան ը-նես, ը-նես,



Օի-վա-րս, մա-ցի ճամ-փու կես:



Տո-լոն մե-ջը քա-ցեր ինձ տես,



ի-մալ է-նիմ, ի-մալ չե-նիմ:



Էլ-ման կի-գա վաղ ձըմ-նան կես,





Ինչ ես ու-զում դու մե- զա-նից,



Մա-ցե օ-րով կե-օր, որ բա-



ժան-վես դու մե- զա- նից:



Բե-լեք, վախ, իմ ոտ-նեք, քե-լեք,
Գա-ցեք դե, է, շուտ-շուտ զա-ցեք.



Գա-ցեք, խոտ բե-րեք, մա-լե-րով պա-հեք,



Բե-լեք, ոտ-նեք, ջան, քե-լեք:

Թողեցի սուլ, հազա կալոշ.
Թըրի ելա վըր վըրու դոշ:
Ավտոք եկան ըռես, ըռես,
Օիվարա, մացի ճամփու կես:
Տոլոն մեջը քացեր ինձ տես,
Իմալ էնիմ, իմալ չէնիմ:
Էլման կիզա վաղ ձմուռն կես,
Իմալ էնիմ, իմալ չէնիմ:
Քելեք ոտներ, քելեք, քելեք,
Օուտ-շուտ քելեք, շուտ-շուտ գացեք,
Գացեք, նստեք, հանգիստացեք,
Քելեք, ֆըլեք, հետո դարձեք,
Քելեք, վայ իմ ոտներ, քելեք:
Այս ինչ էրիր, դու էրեցիր,
Զոռով դարդի տեր էրեցիր,
Ընձի հալիր, մաշեցուցիր:
Ինչ ես ուզում դու մեզանից,
Մացեր օրով կեսօր, որ բաժանվես դու մեզանից:
Քելեք, վախ, իմ ոտներ, քելեք,
Գացեք դե, է, շուտ-շուտ գացեք,
Գացեք, խոտ րերեք, մալերս սլահեք,
Քելեք, ոտներ, ջան, քելեք:

Առաջին ութ տողերից յուրաքանչյուրը կրկնվում է:

34 Պարտեզ մ'ունեն տրախտ ա

J. 84 Moderato



Պար-տեզ մու- ան հը- րախտ ա,



Պար-տեզ մու- ան հը- րախտ ա,



Ծա-ղիկ ու ծաղ- կուն- քի վախտ ա,



Ծա- ղիկ ծաղ- կուն- քի վախտ ա,



Էս յան ել-³ ան սա- րե- րը,



Մեկ էլ տես- ան իմ յա- րը,



Սա- րեր, ձո- րեր, ետ մա- ցեք,



Իմ յա- ռիմ ճամ- փա քա- ցեք:

♩. 84


Տարբերակներ



Հե- ռու ես չես ի- մա- նա:



Ցա- վե- րդդ ոնց եմ քա- շի,



Ջա- նրս քե- զի հա- մար ա:

Պարտեզ մ'ունեն դրախտ ա,
Պարտեզ մունեն դրախտ ա,
Ծաղիկ ու ծաղկունքի վախտ ա,
Ծաղիկ ծաղկունքի վախտ ա,
Էս յամ ելնեմ սարերը,
Մեկ էլ տեսնեմ իմ յարը,
Մեկ էլ տեսնեմ իմ յարը,
Սարեր, ձորեր, ետ մացեք,
Իմ յարին ճամփա բացեք,
Սարեր, ձորեր, ետ մացեք
Իմ յարին ճամփա բացեք,
Յար յարի հետ խոսալով,
Անկանջ արեք, իմացեք,
Ակաջ արեք, իմացեք,

Դարի նման դարդ քաշի,
Ջահել եմ կյանքս կմաշի.
Հեռու ես, չես իմանա,
Ցավերդ ոնց եմ քաշի,
Հեռու ես, չես իմանա,
Ցավերդ ոնց իմ քաշի,
Սարի փշեր բարակ ա,
Լեզուդ մեղր ու կարագ ա,
Սարի փշեր բարակ ա,
Լեզուդ մեղր ու կարագ ա,
Ով սարի համար տղա
Դուն եղիցի, դարդ մարա,
Ջանս քեզի համար ա:

35 Սիրո տրտունգ

♩. 74 Moderato

Մե- նա բա- դե- ռըն գը- նա-լով.

Չորս կող- մեճ ջոր ես հա- նել-ով,

Դար- դե- րուս դա- րման ա- նե- լով,

Դար- դե- րուս դար- ման ա- նե- լով:

Ծառ- նե- րուն թուփ էլ չի մը- նաց,

Դար- դիս դար-ման ա- նե- լով,

Դար-դիս դար-ման ա- նե- լով:



Ծառ- ան- բուն թուփ էլ չի մը- անց,



Դար- դիս դար- մա- ան ա- ան- լով,



Դար- դիս դար- մա- ան ա- ան- լով:

Մեռա բաղերն գնալով,
Չորս կողմեն ջուր ես հանելով,
Դարդերուս դարման անելով,
Դարդերուս դարման անելով:

Ծառերուն թուփ էլ չի մնաց,
Ծառերուն թուփ էլ չի մնաց,
Դարդիս դարման անելով,
Դարդիս դարման անելով:

Ծառերուն թուփ էլ չի մնաց,
Ծառերուն թուփ էլ չի մնաց,
Դարդիս դարմանը անելով,
Դարդիս դարմանը անելով:

36 Իմ Սաքոնը տանուտեր է

Ճ. 86 Allegretto

Ի- մը Սա- քո- նը տա- նու- տեր է,

Ինչ, որ ու- գեյ, էն կը բե- րե,

Իմ Սա- քո- նը կե- րավ ձա- վար,

Կար- ծե տա-վար, իր- կուն ե- կե, աչ- քը խա-վար,

Իմ Սա- քո- նը կե- րավ բա- նջար,

Չըս- լախ ո- ոուն կա- խե խան- չալ,



Եղ- ան՝ դուր- բան իմ Սա- քո- յին,
Չար- խը- ան- ռին,
Չոր բը- ան- ռին,
Ալ բը- լու- զին,
Ծալ բը- լու- զին,
Պա- սի- լու- զին,
Եր- կեան վը- զին,



Ծալ բո- լու- զին:

Իմը Սաքոնը տանուտեր է,
Ինչ որ ուզեյ, էն կը բերե,
Իմ Սաքոնը կերավ ձավար,
Կարծե տավար,
Իրկուն եկե, աչքը խավար,
Իմ Սաքոնը կերավ բանջար,
Չըպլախ ոռուն կախե խանչալ,
Եղան՝ դուրբան իմ Սաքոյին,
Չարխըներին,
Չոր բըներին,
Ալ բըլուզին,
Ծալ բըլուզին,
Պասի լուզին,
Երկեան վըզին,
Ծալ բըլուզին:

ՊԱՏՄԱԿԱՆ ԵՐԳԵՐ ԵՎ ԶՈՆԵՐԳԵՐ

37 Հասան դալա

J. 63 Andantino



Հա- սան դա- լի գըլ- խի լա- լեն,
 Մեռ- ցի գեր- մա- ան- ցու բա- լեն,
 Մայ-րոս չո- քե թոն- դրա բո-ցիս,
 Նի- շա- ան- ծիս ձեռ- քը ծո-ցիս,
 Նո- րա- մա-նուկս օ- րո- րո-ցիս,



Հա- սան դա- լի գըլ- խի լա- լեն,
 Մեռ- ցի գեր- մա- ան- ցու բա- լեն,
 Մայ-րոս չո- քե թոն- դրա բո-ցիս,
 Նի- շա- ան- ծիս ձեռ- քը ծո-ցիս,
 Նո- րա- մա-նուկս օ- րո- րո-ցիս:



17

Ան-տեր մը- անս, քամ-բախ եղ- ցիս,



Վե- րան դառ-անս Հա-սան դա- լա,




Ե- լար շա- ցիս դարդ ու բա- լա:

Հասան դալի գլխի լալեն,
Հասան դալի գլխի լալեն,
Մեռնի գերմանացու բալեն,
Մեռնի գերմանացու բալեն,
Նիշանածիս ձեռքը ծոցին,
Նիշանածիս ձեռքը ծոցին,
Նորամանուկս օրորոցին,
Նորամանուկս օրորոցին:
Անտեր մնաս, քամբալս եղմիս,
Վերան դառնաս Հասան դալա,
Ելար ջանիս դարդ ու բալա:

38 Սուսան յար ջան

♩. 116 Allegretto



Թո-փե-րուն կա-պե- ցին Գո- ռի- սա ըը-



նեն, Սու-սան յար ջան, Գո- ռի- սա ըը- նեն,



Ա-ղա-բե- կի վա- թան վեր-ցը- ռին պը-



լեն, Սու-սան յար ջան, վե ցը- ռին պը- լեն:



Ըն-կել եմ գե- ռի, Սու-սան յար ջան,



վա- նոն չի խե- ռի,



Ըն-կել եմ գե- ռի Սու-սան յար ջան,

Ըն-կել եմ գե-³ ռի. Սու- սան յար ջան,

Վա- անն չի խե- ռի. ռի:

Սու- սան յար-րըն հե- լա Չա-խըր- լու գո-

գան, Սու-սան յար ջան, Չա-խըր- լու գո- գան,

Ա- դա-բե-կին գար- կին ջուխտ ար- տի խո-

⁸⁸ գան, Սու-սան յար գան, ջուխտ ար- տի խո- գան,

Ըն-կել եմ գե- ռի, Սու- սան յար ջան,



Թոփերուն կապեցին Գորիսա քրոնն,
 Սուսան յար ջան, Գորիսա քրոնն,
 Աղաբեկի վաթան վերցրին պլենն,
 Սուսան յար ջան, վերցրին պլենն:

Կրկներգ.

Ընկել եմ գերի, Սուսան յար ջան, Վանոն չի խերի,
 Ընկել եմ գերի, Սուսան յար ջան, Վանոն չի խերվի:

Ես Աղաբեկն եմ գյուզալդարեցի,
 Սուսան յար ջան, գյուզալդարեցի,
 Այս տասներկու տարի արյուն թափեցի,
 Սուսան յար ջան արյուն թափեցի,
 Վերջ ի վերջո հայու ձեռքով գնացի,
 Սուսան յար ջան, ձեռքով գնացի:

Կրկներգ.

Սուսան յարն հելա Չախտլու զոզան,
 Սուսան յար ջան, Չախտլու զոզան,
 Աղաբեկին զարկին ջուխտ արտի խոզան,
 Սիսան յար ջան, ջուխտ արտի խոզան:

Կրկներգ.

39 Գառնիի գովքը

♩. 120 Moderato



Գե- դե- ցիկ եւ տեւ-քով, Գառ- ան,
Ա- նու- նըդ կա եր- կար տա- թի,



Օտր-ընդ հա- թել սա- թը սա- թիս,


♩. 96 Allegretto



Սի-րուն, Բաշ Գառ- ան, Բաշ Գառ- ան:



Զոտր եւ տը- վել Ա-րա- րա- տիս,



Չը- թո- դե- ցիր ժո- դո- վըր- դիս,



Լի- անլ իր մա- հիս ծա- րա,



Սի-րուն, Բաշ Գառ- ան, Բաշ Գա- նան:

Հի- ցը շն- կար, բո - լոր անր էր,

Ե- թե- վան քե- զի քա- վոր էր,

Սի-րում, Բաշ Գառ- ան, Բաշ Գառ- ան;

Գե-վորդ Մարգ-պե-տու-նու ա-մուր տեղ- անս,

Վահ-րամ, Սե- պուհ, Սըմ-բա- տին- անս,

Գոռ ի-շխա-նի- կի օ- թե- վան- անս,

Սի-րում, Բաշ Գառ- ան, Բաշ Գառ- ան,

Գեղեցիկ ես տեսքով, Գառնի,
Անունդ կա երկար տարի,
Շուրջդ հարել սարը սարին,
Սիրում Բաշ Գառնի, Բաշ Գառնի:

Ջուր ես տվել Արարատին,
Ջուր ես տվել Արարատին,
Չթողեցիր ժողովրդին,
Լինել իր մահին ծառա,
Սիրում Բաշ Գառնի, Բաշ Գառնի:

Հինը չկար, բոլոր նոր էր,
Հինը չկար, բոլոր նոր էր,
Երևան քեզի քավոյ, չր,
Սիրում Բաշ Գառնի, Բաշ Գառնի,
Երևան քեզի քավոր էր,
Սիրում Բաշ Գառնի, Բաշ Գառնի:

Գևորգ Մարզպետունու ամուր տեղն ես,
Գևորգ Մարզպետունու ամուր տեղն ես,
Վահրամ, Սեպուհ, Սմբատինն ես,
Գոռ իշխանիկի օթևանն ես,
Սիրում Բաշ Գառնի, Բաշ Գառնի,
Սիրում Բաշ Գառնի, Բաշ Գառնի:

40 Էջմիածնի գովեր

♩. 66 Moderato con anima



Տայ գա, գա- ռը, գա- յը գա- յը, գա- յը գա, գա-րը գա գայ,



Նա- յը գա, գա- ռը, գա- ռա գա- յր, գա- ռը գա- յը, գայ, գայ:



Ա- գը-մահ պա- տա- ռագ- ներ բա- ռե- խո- սը լի- ներ:



Միլ կի գո վա կը տամ սուրբ Էջ- ման տե- դից.



Ա- ռը-ժան է, ո- ռը կա- նենք ա- ռա- քե- լան- քը.



Սե- ռո- թե, Քե- ռո- թե, մա- քուր կու- սան- քը,



Գա- ցի դուռ համ- բու- ռի որ մը- տա վան- քը,



Կա- յը- նա մա- յիլ ե- դա էն սուրբ սե- դա- ցիւն,



Կա- յը- նա մա- յիլ ե- դա էն սուրբ սե- դա- ցիւն,
Տա- ճար- անէր յու- սե- դեմ, ու- կե խա- զե- րիւն,



Ակ ու զը- մը- բովխտ, ալ- մազ շամ ճը- բագ- ան- րիւն,



Ա- կունք- աներ աւն- զիւն է, համ ճա- վա- հիր է,



Ե- բա- ցի այն մար- դուն սըր- տով կը- սի- բե,
Մեր - հա- յոց թա- գա- վոր սուրբ Էջ- ման տեղ- ան,



Մեր սուրբ Էջ- ման տե- ղը կա- սեմ,



Զան- գեր կը . քա- շեմ, ժա- մեր կը խո- սեմ,



Բո- լոր վար- դա- պետ ու ե- պիս-կո- պոս են,



Ջայ- նա- վոր- ներ շատ են սուրբ Էջ- ման տե- դին,



Ջայ- նա- վոր տի-րա- ցու փուր-վառ ծը- խե- լով,



Խա- չով ու խաչ- վա- ոով, քաղ-ցըր բա- ռե- բով,
Ով, որ կը գա հի- շեկ սաղ-մոս կար- դա- լով,



Հար- բե- ցան հըղ- դա-վոր սուրբ Էջ- ման տե- դին:

Parlando

Cantando



Դառ-նանք Թավ-րիզ, Թեյ-րան, շուռ տանք չորս քո - շա,



Չը- բըխ- լու, Էր- զը- բում, շե- բե- նած շոջ ա,



Էն տե--ղաց բե-րած սե- դան ատ-լաս դու- մաշ ա,



Ակ ու զըմ-բովստ ալ-մազ շա-վա-հիս դաշ ա.



Ու-ու-տան, որ շի-հին ծո-վի վը-րա-լա,
Կազ-մե-լով շորս զը-լովս Ա-վե-տա-րա-նա,



Ղա-սաք-Օդ-լին ի-րան շանք ա-րեց տե-դին,



Էս շը-մորի բը տը-վո-ղը Մը-շու Սուլ-թան ա:



Գո-վե-ցինք այս այս-օր սուրբ Էջ-ման տե-դին,



Օգ-նա-կան պա հա-պան ա-կանչ ա-րո-դին:



Տայ նա նա-րը, նա-լը, նա-նայ, նա-լը նա նա-րը, նա նայ,



Տայ նա, նարը, նայը նայը, նայը նա, նարը նա նայ,
Նայը նա նարը, նարս նայը, նարը նայը, նայ նայ,
Անմահ պատարագներ բարեխոսը լինենք,
Միլ կի գո վա կը տամ սուրբ Էջման տեղին,
Արժան է, որը կանենք առաքելանքը,
Սերոբե, Քերոբե, մաքուր կուսանքը,
Գացի դուռ համբուրի որ մտա վանքը,
Կայնա մայիլ եղա էն սուրբ սեղանին,
Կայնա մայի եղա էն սուրբ սեղանին:
Տաճարն էր լուսեղեն, ոսկե խազերին,
Ակ ու զմրովստ, ավազ ջամ ճրագներին,
Ակունքներ անգին է, համ ճավահիր է,
Երանի այն մարդուն սրտով կըսիրե,
Մեր հայոց թագավոր սուրբ Էջման տեղն է,
Երանի այն մարդուն սրտով կըսիրե:
Մեր հայոց թագավոր սուրբ Էջման տեղն է,
Մեր սուրբ Էջման տեղը կասեն,
Զանգեր կը քաշեն, ծամեր կը խոսեն,
Բոլոր վարդապետ ու եպիսկոպոս են:
Ջայնավորներ շատ են սուրբ Էջման տեղին,
Ջայնավոր տիրացու փուրվաճ ծխելով,
Խաչով ու խաչվառով, քաղցր բառերով,
Ով որ կը գա հիշել սաղմոս կարդալով,
Հարբեցան հղիավոր սուրբ Էջման տեղին:
Դառնանք Թավրիզ, Թեյրան շուռ տանք չորս քոշա,
Զբխլու, Էրզրում, շեքենած շոշ ա,
Էն տեղաց բերած սեղան ատլաս դումաշ ա,
Ակ ու զմրովստ ավազ ջավահիր դաշ ա,
Ուռուստան, որ շինին ծովի վրա յա,
Կազմելով չորս գլուխ ավետարան ա,
Ղասսաբ-Օղլին իրան ջանք արեց տեղին,
Էս շնորհք տվողն Մշու Սուլթան ա:
Գովեցինք այսօր սուրբ Էջման տեղին,
Օգնական պահապան ականջ արողին,
Օգնական պահապան ականջ արողին:
Տայ նա նարը, նայը, նա նայ, նայը նա նարը, նա նայ,
Նայը նա նարը, նարս նայը նարը նայը, նայ նայ:

41 Խրիմյան Հայրիկ

♩. 58 Larghetto

Խը- ռիմ- յան Հայ- ռիկ,

Ա- գու- ցըդ Մը- կըր- տիչ,

Դու պի- տի եղ- ցիս, Հայ- ռիկ ջան,

Հա- լը- ռե- ցը- յաց փըր- կիչ:

Տարբերակներ

Դու թա- գա- վոր- ծուտ վե- ռա - դար- լուսմ- բեր կը կազ-

Խրիմյան Հայրիկ,
Անուն Մկրտիչ,
Դու պիտի եղնիս, Հայրիկ ջան,
Հայրենյաց փրկիչ:

Տեսության կերթաս
Դուն թագավորաց,
Ծուռ վերադարձիր, Հայրիկ՝ ջան,
Աթոռ հայրենյաց:

Երբ գարուն կուգա
Կու բացվին արտեր,
Խումբեր կը կազմեն, Հայրիկ ջան,
Երիտասարդներ:

Բոսֆորի ափեր
Գիտենք, չես սիրում,
Փիրուզյա վանքիդ, Հայրիկ ջան,
Կյանքդ ես նվիրում:

Դու մեր կենաց լույս,
Մեր առավոտը,
Փչիր քո սրինգ, Հայրիկ ջան,
Ժողվիր քո հոտը:

Կրկնությունը՝ երկտող առ երկտող մինչև վերջ: -

ԱԾՈՒՂԱԿԱՆ ԵՐԳԵՐ ԵՎ ՀՍԱՂՎԱԾՆԵՐ
ՍԻՐԱՎԵՊԵՐԻՑ

42 Խաս դաշտերով

♩. 168 Moderato



Խաս դաշտերով, խաս գարթերով խաս ալ ձի,




Թափվում է խաս, վուտքերն խաս, խողովն խաս,



Խաս նազանգին, խաս նըստել է խաս բարձին,



Թամքը խաս է, սարքը խաս, նըստողն խաս:



Խաս դաշտերով, խաս տեղ գըթնիմ, խաս մընամ.



Խաս սըրտիս մեջ խաս հուր կըրակ, խաս ալամ.



96 Խաս գըրել է խաս գյուղատան, խաս դալամ,



Էր-կու լյուն խաս, ա- յի- փը խաս, տո- ղըն խաս:

Խաս դաշտերում, խաս զարթերով խաս ալ ձի,
Թափվում է խաս, վուտքերեն խաս, խողըն խաս,
Խաս նազանին, խաս նստել է խաս բարձին,
Թամքը խաս է, սարքը խաս, նստողըն խաս:

Խաս դաշտերում խաս տեղ գթնիմ, խաս մընամ.
Խաս սրտիս մեջ խաս հուր կրակ, խաս ալամ.
Խաս գըրել է խաս գուլխտան, խաս դալամ,
Էրկու լյուն խաս, այիփը խաս, տողըն խաս:

Խաս աշխարում խաս լավութին խաս փափագ,
Խաս քրտինքով խաս գթնըվիր խաս վաստակ,
Խաս եռում է խաս անկըրակ խաս կաթսան.
Ջուրըն խաս է, ախպուրըն խաս, եղըն խաս:

Խաս յարի հիդ խաս ապրեհնք խաս օրիր,
Խաս նազանին խաս հաքիլ է խաս շորիր,
Խաս հյուրընկալ, խաս ծառանիր՝, խաս հուրիր,
Կուկուլեն խաս, սեղանըն խաս, սաղին խաս:

Խաս ժամանակ խաս բանքիրըն խաս գրվեց,
Խաս ճակտիցըն խաս քրտինքը խաս թափվեց,
Խաս արարչեն խաս պատկիրըն խաս տրվեց,
Սայաթին խաս, Նովային խաս, ցեղըն խաս:

Երկրորդ քառյակի վերջին տողը կրկնելով երգողը ավարտում դարձրեց իր երգածը:

43 Կաս չկաս մեկ է

♩. 76 Moderato



Ում հա- մար կը մաշ-վիս, աճ-բախտ հե- դի- ցակ,



Դու քու ազ- գի հա-մար կաս, չը-կաս, մեկ է,



Ի-րե- ցը սի- րե- լու ցա չէ ընդ-ու- ցակ,



Կու- գես ե- դիր հա-ճար, կաս, չը-կաս, մեկ է, Ի-րե-ցը է:



Հա- յի հա- մար ալ-լոց սար- յա- կը սագ է,



Յուր սա- գը յուր ազ- գիմ մեկ հա- վի ձագ է,



Հայ ե- րա-ժիշտ ինչ կա- մե-ճաս ցը-վա- գե,



Նա կու- գե սա-գան-դար, կաս, չը- կաս, մեկ է,



Հայ ե-րա- միշտ ինչ կա- մե- նաս Գը- վա- գե,



Նա կու- գե սա-գան-դար, կաս, չը- կաս մեկ է,



Զի- վան, թուրք լի- ցե- իր' սի-րուն Բագ-Գը- ված,



Հայ ազ-գը չէ սի- որս Բայ- ին եր- գա- սաց.



Հայ ա-շուղ ես, սի- տի մեռ-նիս դու քաղ- ցած,



Իր- ռե աղ- քատ Ղա-գար, կաս, չը-կաս, մեկ է:



Նա կու-զե իր-բև աղ-քատ Ղա-զար, կաս, չը-կաս, մեկ է:

Ում համար կմաշվիս, անբայտ հեղինակ,
Դու քու ազգի համար կաս, չկաս, մեկ է,
Իրենը սիրելու մա չէ ընդունակ,
Կուզես եղիր հանճար՝ կաս, չկաս, մեկ է:

Հայի համար այլոց սարյակը սագ է,
Յուր սագը, յուր ազգին մեկ հավի ծագ է,
Հայ երածիշտ, ինչ կամենաս մվազե,
Նա կուզե սագանդար՝ կաս, չկաս, մեկ է:

Ջիվան, թուրք լինելի՛ր՝ սիրուն հյուգնված,
Հայ ազգը չէ սիրում հային երգասաց,
Հայ աշուղ ես, պիտի մեռնիս դու քաղցած,
Իբրև աղքատ Ղազար, կաս, չկաս, մեկ է:
Նա կուզե իբրև աղքատ Ղազար, կաս, չկաս, մեկ է:

Առաջին և երկրորդ քառյակների վերջի երկտողերը կրկնվում են:

44 Անգութ թռչուն

♩. 75 Moderato un poco mosso



Խը-նամ- բըղ մի փա-կի, աճ-խը-նամ թըղ- չուն,



Ան-գութ թըղ- չուն, տուր քա- ղն-ըզս, գը- նամ ես,

1.

2.



խը- նամ- գը- նամ ես,



Գա- ցիկ-նեմ, տես-նում եմ վատ բը-նու- թյու- նըղ,



Ան-խիղճ որս- կան թող թա- փեն ար- յու- նըղ:

Խնամքդ մի փակի, աճխնամ թռչուն,
Անգութ թռչուն, տուր քարերս, գնամ ես,

Գառնիկն եմ, տեսնում եմ վատ բնությունդ,
Անխիղճ որսկան թող թափեն արյունդ:

Հրեղեն քամի դուրս ել, հարց արա ծառից,
Ծառն արմատախիլ համեն արմատից:

Ի՞նչ օգուտ ես քաղում ինձ պես աղքատից
Անգութ թռչուն, տուր քարերս, գնամ ես:

Բոլոր երկտողերը կրկնվում են:

45 Սիրուն թռչուն

♩. 74 Moderato un poco mosso



Ա- դա- չում եմ, ինձ մի հա- մի



Սի- րե- կա- մից, սի- րուն թըռ-չուն,



Խելք ու միտ- քըս դու մի տա- մի



Գա-դա- փա- րից, սի- րուն թըռ- չուն:

Ադաչում եմ, ինձ մի համի
Սիրեկամից, սիրուն թռչուն,
Խելք ու միտքս դու մի տամի
Գադափարից, սիրուն թռչուն,
Խելք ու միտքս դու մի տամի
Գադափարից, սիրուն թռչուն:

Երանի բռնեի տուտդ,
Հասկանայի ել ու մուտդ,
Տեսնեի ինչ է օգուտդ
Այդ քարերից; սիրուն թռչուն,
Տեսնեի ինչ է օգուտդ
Այդ քարերից, սիրուն թռչուն:

Գառնիկն եմ, մեկ սիրո գերի,
Նպատակս մի թողի թերի,
Աստված օգնի քեզի վերի
Սուրբ կամարից, սիրուն թռչուն,
Աստված օգնի քեզի վերի
Սուրբ կամարից, սիրուն թռչուն:

46 Հայրենիք

♩. 84 Moderato

Ինչ տեղեկու- կու- թյուն ձե- գա- ցից,
 Մեղ-րից կա- րագ եվ շա- քա- ռից,
 Մեղ-րից կա- րագ եվ շա-քա- ռից,

Գը-րեմ Հայ- րե- ցիք, Հայ- րե- ցիք,
 Քա-ղցր Հայ- րե- ցիք, Հայ- րե- ցիք,
 Գը-րեմ Հայ- րե- ցիք, Հայ- րե- ցիք:

Օ- րերս ան-ցան ու-րա-խու- թյան,
 Գու-ցե հաս- ցը- ան տե-սու- թյան,
 Գու-ցե հաս- ցը- ան տե-սու - թյան:

Հա- րա- ժամ Տի- րո- ջը փառք տամ,
 Ա- ցուշ Հայ-րե- ցիք, Հայ- րե- ցիք,
 Ա- ցուշ Հայ-րե- ցիք, Հայ- րե- ցիք:

Ինչ տեղեկություն ձեզանից
 Գրեմ Հայրենիք, Հայրենիք,
 Մեղրից, կարագ և շաքարից
 Քաղցր Հայրենիք, Հայրենիք:

Օրերս անցան ուրախության,
 Հարածամ Տիրոջը փառք տամ,
 Գուցե հասցնեմ տեսության,
 Ացուշ Հայրենիք, Հայրենիք:

Ենգին հեռու Հայրենիքից,
 Սիրուն, քնքուշ Հայաստանից,
 Աշխարհի մեջ ամեն բանից
 Քաղցր Հայրենիք, Հայրենիք:

Ո՛վ դու եղեմաբույս, բալասան ծաղիկ,
Ո՛վ դու եղեմաբույս, բալասան ծաղիկ,
Բացվիր, քո բացվելու ժամանական է հասել,
Բացվիր և ունեցիր օրեր երջանիկ,
Բացվիր, քո բացվելու ժամանակն է, հաստատվել է,
Բացվիր, քո բացվելու ժամանակն է, հաս:

Ձմեռն եկավ անցավ, գարուն է արդեն,
Բարեխառն անձրև կգա երկնքեն,
Բարեխառն անձրև կգա երկնքեն,
Ըլ չբացված հողեր չկա բացի քեզ,
Բացվիր, քո բացվելու ժամանակն է հաս:
Բացվիր, քո բացվելու ժամանակն է հաս:

Խղճալի Հրկեզիս մի թողիր տխուր
Ո՛վ դու ամենագեղ, ամենամաքուր:
Ո՛վ դու ամենագեղ, ամենամաքուր:
Վերքով լցված սրտիս ուրախություն տուր,
Բացվիր, քո բացվելու ժամանակն է հաս:
Բացվիր, քո բացվելու ժամանակն է հաս:

48 Այստեղ կա մի քանի գերապատիվ մարդ

♩. 132 Moderato



Այս-տեղ կա մի քա-նի/ գե-րա-պա- տիվ մարդ,



Կը խըն-դրեմ, սիրտ իմ, սո-ցա մեկ գո- վա-սանք տուր,



Ո-ման-քը ծեր, ո-մանք հայ ե- թի- տա- սարդ,



Մըշ-մա-րիտ հո- գու տեր, որ- պես վը-ճիտ ջուր,



Ո- ման-քը ծեր, ո-մանք հայ ե- թի- տա-սարդ,



Մըշ-մա-րիտ հո- գու տեր, որ- պես վը- ճիտ ջուր:

Տարբերակ



Հըր-կեզ երգ ա- սե- լու

Այստեղ կա մի քանի գերապատիվ մարդ,
Կը խնդրեմ, սիրտ իմ, սոցա մեկ գովասանք տուր,
Ոմանքը ծեր, ոմանք հայ երիտասարդ,
Ծջմարիտ հոգու տեր, որպես վճիտ ջուր:

Արտաքուստ և ներքուստ պարզ ու վճիտ են,
Եւ հորդափույս աղբյուր ականը գիտեն,
Բարության ճետևող խոնարհամիտ են,
Ու թանձրամիտ հպարտ, ոչ վերի թալուկ:

Հրկեզ, երգ ասելու չես քաշե տնագ,
Միճչև մահդ, քանի կենդանի ես, կաս,
Որ որ երգես, փառք ու պատիվ կստանաս,
Հորինած երգերդ չեմ գնա իզուր:

49 Երկչուղ մի կրիր

Ն. 112 Allegretto



Եր- կչուղ մի կը- րիր, իմ հոգ- յակ,



Դու կըռ- վիր Գայլ Վա- հա- նի պես,



Ազ-գիո՞ հա- մար լեր նը- հա-տակ՝



Մ'ա-մի- կոն- յան Վար- դա- նի պես:

Երկչուղ մի կըրիր իմ հոգյակ,
Դու կըռվիր Գայլ Վահանի պես,
Ազգիո՞ համար լեր նըհատակ՝
Մ'ամիկոնյան Վարդանի պես:

Ունեցիր ափռելի պատկեր,
Եվ կատարիր ապուծի դեր,
Թշնամույն հնազանդ մի լեր՝
Խոթեցի քաջ Հովնանի պես:


Խնդրում եմ Աստղիկ, միակ,
Եղիր հոգեհան հրեշտակ,
Քաջությամբդ տար հաղթանակ՝
Գուրգեն Աբու Բեչանի պես:

Խոսելով

Ահա դա Ռաշիդի սիրունի Աստղիկն է երգել և ամուսնուն քաջալերել դեպի իր ազգականներին՝ մահմեդական քրդերին կոտորելու համար, և նա իսկույն չափազանցությամբ կոտորած է տվել մեր հակառակորդ դիմադրողներին:

50 Արի որդիս արհեստի տամ


♩. 72 Allegretto



Հայր - Ա- ռի, որ- դի՛ս, ար- հես- տի տամ,



Ար- հես-տի- ցը լավ բան չը- կա,



Ար- հեստ-նէ աղ- բյու- ըն մա- թոր,



Ար- հես- տի- ցը լավ գործ չը- կա:



Ա- ռի, դառ- նանք գյու- ըն նո- ռից,



Լավ գործ կը- տամ քե-զի հան- գիստ,



Ա- ռի, քեզ տամ տը- րակ-տո- ռիստ,

Դը-րա- մից լավ ար-հեստ չը- կա,

Ա-րի քեզ տամ տը-րակ- տո- թիստ,

Դը-րա- մից լավ ար-հեստ չը- կա:

Որդի - Ամ-բողջ օ-րը չո-լը մը-նամ,

Ո-տից զը-լովս մտր կը-դատ-նամ,

Գի-շեր-նե-րը քուն չու-նե-նամ,

Դը-րա- մից վատ ար-հեստ չը կա:

- Հայր - Արի, որդի՛ս, արհեստի տամ,
Արհեստիցը լավ բան չկա,
Արհեստն է աղբյուրը մաքուր,
Արհեստիցը լավ գործ չկա:
- Հայր - Արի, դառնանք գյուղը նորից,
Լավ գործ կտամ քեզի հանգիստ,
Արի, քեզ տամ տրակտորիստ,
Դրանից լավ արհեստ չկա:
- Որդի - Ամբողջ օրը չոլը մնամ,
Ոտից գլուխ մուր կդառնամ,
Գիշերները քուն չունենամ,
Դրանից վատ արհեստ չկա:
- Հայր - Աշխատիր, ունեցիր եռանդ,
Որ զուր չանցնի քո ժամանակ,
Արի քեզ տամ դարբին, մալբանդ,
Դրանից լավ արհեստ չկա:
- Որդի - Գիտես թե մալբանդն էլ մարդ է,
Անասունի ոտք կը քերթե,
Ձին քացկով տա, բերան ջարդե,
Դրանից վատ արհեստ չկա:

- Հայր - Արդեն դարձել ես փասած ծառ,
Աշխատիր չմնաս տկար,
Արի քեզ տամ կոշկակար,
Դրանից լավ արհեստ չկա:
- Որդի - Ես քո ծերուկ խելքիմ աշեմ,
Ամբողջ օրը ասեղ քաշեմ,
Ջահել-ջահել կյանքս մաշեմ,
Դրանից վատ արհեստ չկա:
- Հայր - Արի, վառիր լույս ու լապտեր,
Չափիր երկար ճանապարհներ,
Արի քեզ տամ դարձիր շոֆեր,
Դրանից լավ արհեստ չկա:
- Որդի - Ախ, ինչ վատն է շոֆերի կյանք,
Հարբած է մա տարին ու օր,
Մի օր ավտոն կզցի ձոր
Դրանից վատ արհեստ չկա:
- Հայր - Մի քան ասեմ խելքի մոտիկ
Թող խրատեն քեզ այս մարդիկ,
Արի քեզ տամ դարձիր դերձակ,
Դրանից լավ արհեստ չկա:
- Որդի - Եթե, գիտա, դու իմ հայրիկ,
Կճարես ինձ սիրուն աղջիկ,
Ուտեմ, խմեմ, հետը ման գամ,
Դրանից լավ արհեստ չկա:

51 Հեռու տեղից մոտդ եկա

♩. 88 Moderato



Հե-ռու տե- ղից մո-տըդ ե- կա,



Բա-րով տե- սա, հո-վիվ, քե-զի:

Հեռու տեղից մոտդ եկա,
Բարով տեսա, հովիվ, քեզի:

Ուրախության մեջ ես ընկա
Բարով տեսա, հովիվ, քեզի:

Հովիվ, քեզիկ մատաղ լինեմ,
Ես ոչ ոքիմ բարև չունեմ:

Կորսվ սիրուհիս, ուր գնամ,
Բարով տեսա, հովիվ, քեզի:

Հավել է սարերի ձյունը,
Կոտրվել սրտերի սուցնը:

Ավետիք քերիք մեր տունը,
Բարով տեսա, հովիվ, քեզի:

52 Մ'ասս բարով, ես գնում եմ

♩. 84 Moderato



Աղվան - Ա- թի, տես- նեմ, ա- զիզ ըն- կեր,



Մը- անս բա- րով, ես գը- նում եմ,
Գու- ցե վա- տա- նս վեր- ջը մեր,



մը- անս բա- րով, ես գը- նում եմ,
մը- անս բա- րով, ես գը- նում եմ:



Օսան - Հո- վիվ ըն- տիր, պատ-վա-կան հյուր,



Հո- վիվ մի' գը- նա, մի' գը- նա,



Ան- զին, թան- կա- զին իշ- խա- նըս,
Ան- զին, թան- կա- զին իշ- խա- նըս,



Դար- ձիր մի' գը- նա, մի' գը- նա,
Ա- թի, մի' գը- նա, մի' գը- նա:



Աղվան - Աղ- վան-ան, տըր- տում, տը-խուր եմ,
Այս րո- պե- քե- գի հյուր եմ,



Բեր ե-րես- ան- րըդ համ- բու- րեմ,



Մը- նաս բա- րով, ես գը- նում եմ,



եւ գը- նում եմ:

Աղվան - Արի, տեսնեմ, ազիզ ընկեր,
Մ'նաս բարով, եւ գնում եմ,
Մ'նաս բարով, եւ գնում եմ,
Գուցն վատանա վերջը մեր,
Մ'նաս բարով, եւ գնում եմ:

Օսան - Հովիվ ընտիր, պատվական հյուր,
Հովիվ մի' գնա, մի' գնա,
Անգին, թանկագին իշխանս,
Դարձիր մի' գնա, մի' գնա,
Անգին, թանկագին իշխանս,
Արի, մի' գնա, մի' գնա:

Աղվան - Աղվան եմ, տրտում, տխուր եմ,
Այս բոպե քեզի հյուր եմ,
Բեր երեսմերոյ համբուրեմ,
Մ՛նաս բարով, ես գնում եմ:

Օսան - Խեղճ Օսանիս բան դժվար է,
Միրես, Աստված մխիթարեր,
Ամբողջ կյանքս քեզ համար է,
Արի՛, մի գնա, մի՛ գնա:

Հաջորդող տներում, թվում է թե երգողը շփոթում է Աղվանի և Օսանի ասածները, մենք փորձեցինք կարգավորել, բայց հինգերորդ տունը մի տողով պակաս մնաց:

Աղվան - Արի անենք ուխտ ու պայման,
Երբեք չի հաղթվի սայման (սահման),
Մ՛նաս բարով, ես գնում եմ:

Օսան - Ձեմ հոժարի ես այդ բանին,
Այդպիսի անխիղճ պայմանին,
Կյանքս մատաղ իմ Աղվանին,
Արի, մի՛ գնա, մի՛ գնա:

Երրորդ քառյակից մինչև վերջ կրկնվում են քառյակների վերջին երկտողերը:

53 Ազնիվ ընկերից հեռացա

♩. 120 Allegretto animato



Ազ-նիվ ըն-կե-րից հե-ռա-ցա,



Ե-կա, մա-ցի օտա-րություն:



Սի-րե-լու-ցըս կա-Եր-գեր ու-


Ազնիվ ընկերից հեռացա,
Եկա, մացի օտարություն:
Սիրելուցս կարոտացա,
Նստա, լացի օտարություն:

Երգեր ունեմ առանձին տեղ,
Թիթեռի պես վառա անմեղ:
Ես եմ այստեղ, սիրունիս այնտեղ,
Լավ հասկացիր օտարություն:

Եկա, մացի օտար աշխարհ,
Երկինք վրես մութն ու խավար:
Աղվանն եմ հասկացիր հար,
Վերքս բացիր օտարություն:

54 Ինձանից չնեղանաք

♩. 88 Moderato



Ին-ձա-նից չը-նե-ղա-նաք, հա-մեստ քոյ-րիկ- ներ,



Չը-կար-ծեք ե-կել եմ, այս-տեղ կը-մը- նամ,



Ու-զում եմ իմ սիր-տըս ձե-զա- նով բա-նամ,



Մի բա-ժակ ջուր տը-վեք, խը-մեմ ու զը- նամ:



Եզ-րով կանց-կա-ցը-նեմ, նամ-փեմ ձեզ լի- նի,



Սըր-տիս մե-ջը կա էլ ցա- վի կըսկիծ- ներ,



Թոյ-նը ես կը- խը-մեմ, մեղ-րը ձեզ լի- նի,



Ես Ասլիճ-եմ, սը- գա- վոր-ված եմ,



Քյա-րա- միս կոր- ցը- րել



եմ, ես մո- լոր ված եմ:

Ինձանից չնեղանաք, համեստ քույրիկներ,
Չկարծեք եկել եմ, այստեղ կմնամ,
Ուզում եմ իմ սիրտս ձեզանով բանամ,
Ուզում եմ իմ սիրտս ձեզանով բանամ,
Մ'ի բաժակ ջուր տվեք, խմեմ ու գնամ:

Եզրով կանցկացնեմ, ճամփեմ ձեզ լինի,
Սրտիս մեջ կա էլ ցավի կսկիծներ,
Սրտիս մեջ կա էլ ցավի կսկիծներ,
Թույլնը ես կխմեմ, մեղրը ձեզ լինի:

Ես Ասլիճ եմ, սգավորված եմ,
Ես Ասլիճ եմ, սգավորված եմ,
Քյարամիս կորցրել եմ, ես մոլորված եմ:

55 Սիրուն կաքավ

Ջ. 132 Allegro



Իճձ- ցից ձե- զի



չի գա վը- նաս,



Սի-րուն կա-քավ, .ես ուր- սորդ չեմ,



Իճ- չու ի- զուր



հե- ոու կեր- թաք,



Սի- րուն կա-քավ, ևս ուր-սորդ չեմ:

Իճճից ձեզի չի գա վնաս,
Սիրուն կաքավ, ես որսորդ չեմ,
Իճչու իզուր հեռու կերթաք,
Սիրուն կաքավ, ես որսորդ չեմ:

Փափագ եմ, ձեզ քիչ մտիկ տամ,
Կուզեմ ձեզ մոտ սիրուն ման գամ,
Երգ ու պարով կուզեմ խաղալ,
Սիրուն կաքավ, ես որսորդ չեմ:

Ճամփորդ եմ, զընում եմ ճամփա,
Երգիչ եմ, երգում եմ հիմա,
Բազե չունիմ թևիս վրա,
Սիրուն կաքավ, ես որսորդ չեմ:

Քարամ, ունիս մի հատ փափագ,
Ջեռքի սազի քաղցր նվագ,
Ջեզ է գալիս արագ, արագ,
Սիրուն կաքավ, ես որսորդ չեմ:

56 Անթառամ վարդի սիրուց

♩. 92 Allegretto con anima



Ան- թա- ռամ ալ վար- դի սի- րուց,



Խը- միր, կա- սեմ՝ ա- նուշ լի- գի,



Մեղ- րի ան- մահն քաղ- ցըր քա- ժակ,



Խը- միր, ա- սեմ՝ ա- նուշ լի- գի:



Գի- նու քա- ժակ՝ ան- քար- գե- լի,



Թե- կուզ ով որ կը- վա- լե- լի,



Կը- վար- տի- րիմ ա- ռատ լի- գի,



Անթառամ ալ վարդի սիրուց,
Խմիր, կասեմ՝ անուշ լիցի,
Մեղրի մման քաղցր բաժակ,
Խմիր, ասեմ՝ անուշ լիցի:

Գինու բաժակն էր հարգելի,
Թեկուզ ով որ կվայելի,
Կվարտիրիմ առատ լիցի,
Խմիր, ասեմ՝ անուշ լիցի:

Պայծառ, քեզ կը հարգեն արդար,
Ընկերներիդ հետ հավասար,
Ով իմ ճշմարիտ բարեկամ,
Խմիր, ասեմ՝ անուշ լիցի:

Բոլոր քառյակների վերջի նրկսողերը կրկնվում են:

ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ԵՐԳԵՐ

57 Սուրբ երգեհոն (Կոմիտասի)՝

♩. 92 Andantino



Չը-թո-ղե-ցիր եր-զը մե-ռնի, վար- դա-պե՛տ.



Խա-զին տը-վիր, որ կյանք առ- մի, վար- դա- պե՛տ,



Հիմ Գողթանից դեռ շատ ա-ռաջ ծըն-ված էս,



Փառ-քըդ բե-րիր դա- րիս խառ-ճիր, վար-դա-պե՛տ:



Սուրբ եր- գե- հոն հա- մա- փյուտ,



Չայ-ճիր, խ- սիր, մի՛ մը- անը լուտ,



Մի հա-հա- տակ ու ծը- վատ- ված,

1. 2.

Ազ-գի մըր- մոտ, Կո- մի-տա՛ս, Կո- մի- տաւ:

Չըթողեցիր երգը մեռնի, վարդապե՛տ,
 Խաչին տըվիր, որ կյանք առնի, վարդապե՛տ,
 Հին Գողթանից դեռ շատ առաջ ծնված ես,
 Փառքդ բերիր դարիս խառնիր, վարդապե՛տ:

Սուրբ երգեհոն համասփյուտ,
 Ջայնիր, խոսիր, մի՛ մնար լուտ,
 Մի նահատակ ու ծվատված,
 Ազգի մըռմոտ, Կոմիտա՛ս:

Ասում էին, թե հայ ազգին երգ չկա,
 Հայկի այգում ուրույն համով բերք չկա,
 Անգուգական մեր քանքարը փրկեցիր,
 Քո ձեռքի պես հրաշագործ ձեռք չկա:

Վշտով լեցուն, Փարիզի մեջ մահ գտար,
 Անմահ էակ, միթե՞ մահվան գոգ մտար,
 Երգիչ Հայրիկ, մեծին երբեք մահ չկա,
 Ապրում է հար, հավերժ անմահ դարեդար:

Քառյակների ու կրկներգերի վերջին տողերը կրկնվում են:

58 Կոմիտաս

Ջ. 104 Allegretto



Բա- մի կա հայ, կա հա-յու-թյուն,



Ա- նու- անդ կա, Կո- մի- տա՛ս,



Ան-լը- ուն լի գան- գա- կա- տուն,

1.



Եր- գի ար- քա, Կո-մի-տա՛ս,

2.



ար- քա, Կո- մի- տաս:



Փա- ռի- գի մեջ քը-սան տա-րի



Տըն- քա- յիր դու գար- կից չա- ռի,



Հայ-րկը միշտ կազ- դա- րա- րի՛



Կա՛, հա- վետ կա՛, Կո- մի- տաս:

Քանի կա հայ, կա հայություն,
Անունդ կա, Կոմիտա՛ս,
Անլուելի զանգակատուն,
Երգի արքա, Կոմիտա՛ս:

Ո՛վ կարգավոր լույս վարդապետ,
Հոգով երգի, աշխարհի հետ,
Անզուգական արվեստագետ,
Քո պես քիչ կա, Կոմիտա՛ս:

Ըստ լուսավոր մտքեր արժան,
Մորթեց յաթաղանը դաժան,
Սևակ, Ջոհրայ ու Վարուժան,
Եղեռնի վկա, Կոմիտա՛ս:

Իթիհատի անարժ դեղը
Հանեց արյուն հորդ հեղեղը,
Մթագնվեց քո ուղեղը
Ու կտնջա, Կոմիտա՛ս:

Փարիզի մեջ քսան տարի
Տնքացիր դու զարկից չարի,
Հայրիկը միշտ կազդարարի՛
Կա՛, հավետ կա՛, Կոմիտաս:

Բոլոր քառյակների վերջին երկու տողը կրկնվում է:

59 Պարույր Սևակին

♩. 108 Allegretto



Ռա-ժան ցա-վից Հայ աշ-խարհ-նէ մոր-մո-քում,



Մըր-մոտ տի-րեց ա-մեն սըր-տում ու հո-գում,



Չար վայր-կյա-նը խը-լեց տա-րավ Սե-վա-կին,



Ան-մըլ-խի-թար. իր մեծ կո-րուստ-նեցք սը-գում:



Ե-տը բե-րե-քը, մի' տա-րեք,



Նա ծըն-վել էր մոր Նա-րեկ,



Մեր գը-րա-կան հան-ճա-րին,



Սև հո- ղի տակ մի մա- րեք:



Ետ բև- բեք, մի տա- նեք,



Նա ծնվել էր նոր Նա- ղեկ.



Մեր գը- ռն- կան հան- ճա- րին,



Սև հո- ղի տակ մի մա- րեք:

Դաժան ցավից Հայ աշխարհն է մորմոքում,
Մրմուռ տիրեց ամեն սրտում ու հոգում,
Չար վայրկյանը խլեց տարավ Սևակին,
Անմխիթար, իր մեծ կորուստն ենք սգում:

Ետ բերեք, մի' տարեք,
Նա ծնվել էր նոր Նարեկ,
Մեր գրական հանճարին,
Սև հողի տակ մի մարեք:

Երգիչ Հայրիկ, մի ճրագ ես շատ աղոտ,
Ծրագն ինչ է Արեգակի լույսի մոտ,
Մեր բուրդին ալֆան էր ու օմեգան,
Չասված խոսքին, ախ մնացինք մենք կարոտ:

60 Քույրիկ

♩. 92 Andantino



Փըր-փը-րա- տես ու դա- ժան



Ե- փը- րա- տի ջու- րը,



Խը- լեց ու տա- րավ,



Իմ մի- յակ բույ- րը,



Տաա- նու- հինգ թը- վից,



Ան- ցավ մոտ կես դար,



Դար- ձյալ չի բուժ- վել,



Սըր-տիս մըր- մու- ող:



Քույ- թի- կը շահ, քույ- թիկ,



Ես քույ- թիկ - չու- գեմ,



Ս- թի քեզ տա- գեմ,



Ինձ քույ- թիկ ա- գեմ:

Տարբերակներ,



Քույ- թիկ Ս- թի քեզ- տա-



գեմ թիկ ա-

Փրփրատես ու դաժան
Եփրատի ջուրը,
Խըլեց ու տարավ
Իմ միակ քույրը,
Տասնուհինգ թըվից,
Անցավ մոտ կես դար,
Դարձյալ չի բուժվել,
Սրտիս մըրմուռը:

Քույրիկ ջան, քույրիկ,
Ես քույրիկ չունեմ,
Արի քեզ տանեմ,
Ինձ քույրիկ անեմ:

Ու գետը տարավ
Գետը անիրավ,
Այն էս չգիտեմ,
Ում բաժին արավ,
Եղբորը թողեց,
Վշտով պարուրված,
Ու անվերադարձ
Քույրիկս կորավ:

Իսկ դու, քույրիկ ջան,
Քրոջս ես նման,
Քույրիկ կանչելով,
Ես գտնեմ դարման:
Երգիչ Հայրիկն եմ,
Գլթոտ եղբոր պես,
Աղաչում եմ քեզ,
Անչափ, անսահման:

61 Գնացել են անդարձ

♩. 62 Moderato maestoso



Հին ա- վան-դույթ- մե- ռը մեր սուրբ հայ- թե- թի,




Գը- նա- ցել են ան- դարձ, էլ ճետ չեն դառ- նա:

♩. 94 Un poco piu mosso



Ա- մեն տե-սան- կյու-մից թե՛ չար, թե՛ բա- թի,



Գը- նա- ցել են ան-դարձ, էլ ճետ չեն դառ- նա:



Գը- նա- ցել են ան-դարձ, էլ ճետ



չեն դառ- նա:

Հին ավանդույթները մեր սուրբ հայրերի
Գնացել են անդարձ, էլ ճետ չեն դառնա:
Ամեն տեսանկյունից թե՛ չար, թե՛ բարի,
Գնացել են անդարձ, էլ ճետ չեն դառնա:

Հին խարազ սայլերը սապոնի կոտոշով,
Բարդոց էին գնում եզնով ու զոմեշով,
Բեր գնացող կանայք ձիով ու էշով,
Գնացել են անդարձ, էլ հետ չեն դառնա:

Հին բրգաձև տները մեկ-մեկ Սիս, Մասիս,
Դեռ կանգնած են առջև սեփական աչքիս,
Յոթ շաբաթ երդիկից կախված ակլատիս,
Գնացել են անդարձ, էլ հետ չեն դառնա:

Կամն ու կանանդեն վերացաք,
Էլ ոչ թեղ, ոչ էրան, ոչ կալ ու մարագ,
Ոչ աշան քաշել, ոչ ավլել թեղի տակ,
Գնացել են անդարձ, էլ հետ չեն դառնա:

Տատիս սրտանոցը, մեջքի լայն գոտին,
Յոթ տապակ շալ դեյրեն հասնում էր գետին,
Ոսկե խարանֆիլը, որ զարդն էր քթին,
Գնացել են անդարձ, էլ հետ չեն դառնա:

Տարվում էին յոթ շաբաթվա մեծ պատով,
Ձերթով ճմուռ ոտում էինք հավեսով,
Աշուղ Հայրոն Ղարաբաղի իր սագով
Գնացել են անդարձ, էլ հետ չեն դառնա:

Ռեսի ձիթհանքի գոմշի փնչոցը,
Գելիագի հասնելը կախտան չոոցը,
Ջագյան զեմբիլների ձեթ ջըլջըլոցը,
Գնացել են անդարձ, էլ հետ չեն դառնա:

Սիրական, Աղարեկ, Սարիքեկը վարպետ,
Ցնծում էին, երբ կարասն էր լցվում ձեթ,
Բալագ Գևորգ մեծ սակառն էլ իր հետ,
Գնացել են անդարձ, էլ հետ չեն դառնա:

Յուրաքանչյուր քառյակի վերջին տողը կրկնվում է:

62 Երդում


ձ. 112 Allegretto



Ա-րով- յա-նը հայ-րե- ցա- սեր



Տը-վեց ազգ սի- րե- լու պատ- վեր,



Լը- սեր, հայ ե- րի- տա- սարդ-ներ:



Մեր Հայ- րե- ցիք, սեր Հայ- րե- ցիք,



Վեհ Հայ- րե- ցիք չը- մո- ու- ցանք,



Թե- կուզ ցա- հա- տակ էլ դառ- ցանք,



Մեր Հայ- րե- ցիք, սեր Հայ- րե- ցիք ցանք:



Հայ-րիկ, հա- յոց սերտ բա- ռե- կամ՝



Փըր-կո- ղը ռուս- ան հա- թա- ժամ,



Չենք մո- ոս-նա սեր- մու լսը- մամ:

Աբովյանը հայրենասեր
Տվեց ազգ սիրելու պատվեր,
Լսեք, հայ երիտասարդներ:

Կրկներգ- Մ'եր Հայրենիք, սեր Հայրենիք,
Վե՛հ Հայրենիք չմոռանաք,
Թե՛կուզ մահատակ էլ դառնանք:

Ավարայրում զոհվեց Վարդան,
Ազան հոչակվեց Հայաստան,
Մեծերը մեզ ամեծք կտան:

Կրկներգ

Ավարայրի դաշտին աշենք,
Վարդան, Խորեն, Ստոմ հիշենք,
Ազգության ծառը չտաշենք:

Կրկներգ

Կորցրեցի՞նք Անի ու Վան,
Բայց ճառագեց նոր Երևան,
Կանգ չի առնի մեր քարավան:

Կրկներգ

Մեր կենաց դեմ սուսեր, սվին,
Մահն էր արարել մեզ հիմնովին.
Մատաղ եմ ծագող Արևին:

Կրկներգ

Հայրիկ, հայոց սերտ քարեկամ՝
Փրկող ոռան է՝ հարածամ,
Չենք մոռանա սերմ ու խմամ:

Կրկներգ

Կրկներգերը երգում են երկուսկան անգամ:

63 Հայոց ճրագը

♩. 112 Allegretto



Ձոր-սը հա- զար տա- րի, որ միշտ



Վառ-վում է հա- յոց ճը- րա- գը,



Կյան-քում կը- րե- լով ցավ ու վիշտ.



Վառ-վում է հա- ոց ճը- րա-գը, կյան-քում րա-:

Ձորսը հազար տարի, որ միշտ
 Վառվում է հայոց ճրագը,
 Կյանքում կրելով ցավ ու վիշտ,
 Վառվում է հայոց ճրագը:

Հայրի՛կ, մեծ է աման ձերի,
 Ձի վերջանա այն, չի հատի,
 Դեմ դիմաց մայր Արարատի,
 Վառվում է հայոց ճրագը:

Քառյակների վերջին երկու տողերը երգվում են երկուսկան անգամ:

64 Տառերն հայոց

♩. 114 Andantino




Մա- հա- մերձ տըն-քում էր մայր Հա- յաս- տա- նը,



Բը-ժիշկ ե- ռե- վա- ցին տա-նե- թըն հայ- ոց,



Օ- տա- թը բե- թել էր մահ- վան պա-տա- նը,



Հա-րու-թյուն տը- վե- ցին տա- նե-թըն հա- յոց,




Օ-տա- թը բե- թել էր մահ-վան պա-տա-նը,



Հա-րու-թյուն տը- վե- ցին տա- նե- թըն հա- յոց:



Եր- գիչ Հայ- ռի- կը գի- տի քիչ դըր- վագ,



Մահամերձ տնքում էր մայր Հայաստանը,
Բժիշկ երևացին տատերն հայոց,
Օտարը բերել էր մահվան պատանը,
Հարություն տվեցին տատերն հայոց:

Երգիչ Հայրիկը գիտի քիչ դրվագ,
Բայց այժմ նրանք դարձել են հավաք,
Մատենադարանի անխախտ հարկի տակ,
Հավետ հաստատվեցին տատերն հայոց:

Քառյակների վերջին երկու տողերը կրկնվում են:

65 «Արմենիա» լողա

♩. 65 Andantino

Երբ որ վե-րսու-ցալ
 մեր շը-քեղ Ա.-նին,
 Են-դար-կը-վե-ցինք օ-
 տա-րի գա-վա-գա-նին,
 Այ-ծըմ ե-կեղ է,
 հա-սել ժա-մա-նակ,
 Պիտ գու մար-վեմ որ-դի-քը



Մայ- Հա- յաս- տա- ցի:



«Ար- մեճ- իս» լո- ղա



ա- փե- րը քե- նա- վոր,



Ու ըս- փյուռ- քի- ցը քեր



մեր պան- դուխտ եղ- բոր:



Ե- ղիր ա- մեճ տեղ,



որ որ մի հայ կա,

Նը- կա- տիր, ա- սա
 թող Հայ- ըն- գիր գա,
 Բախ- տի հար- վա- ծը
 հա- յի- ան ցը- ³ ընդ է,
 Բավ է մայր հո- ղից
 մը- նա բա- ցա- կա:

Երբ որ վերացավ մեր շքեղ Անին,
Ենթարկվեցինք օտարի գավազանին,
Այժմ եկել է, հասել ժամանակ,
Պիտ գունարվեն որդիքը Մայր Հայաստանի:

Կրկներգ «Արմենիա», լողա ասիեր հեռավոր,
Ու սփյուռքիցը բեր մեր պանդուխտ եղբոր:

Եղիր ամեն տեղ, ուր որ մի հայ կա,
Նկատիր, ասա թող Հայրենիք գա,
Բախտի հատվածը հային ցրել է,
Բավ է մայր հողից մընա բացակա:

Կրկներգ

Խփվել է հովիվ, ցրվել է հոտը,
Այլոց մնացել մեր սուրբ արոտը,
Քեզ է վիճակվել ազգահավաքը,
Բեր, պանդուխտ եղբորս առնեն կարոտս:

Կրկներգ

Դժվար է, դժվար, ո՛վ երգիչ Հայրիկ,
Որ մարդն ապրի առանց հայրենիք:
Իմ Հայաստանի ծակող դավ փուշը,
Կենսատու է, քան օտարի ծաղիկ:

Կրկներգ

Կրկներգը երգվում է երկուական անգամ:

66 Անդրանիկին

J. 82 Allegro

Բո սի- րած ազգ- և:

քեզ գո- վա- րա- ցում,

Հայ ազ- գի ֆե- րոս,

ան-մա'հ Ան- դրա- ցիկ,

Փայ- լուն հաղ- թա- ցա- կիդ

եր- գեր եմ եր- գում,

Հայ ազ- գի ֆե- րոս,





Քո սիրած ազգն է քեզ գովաբանում,
Հայ ազգի հերոս, անմահ Անդրանիկ,
Փայլուն հաղթանակիդ երգեր են երգում,
Հայ ազգի հերոս, անմահ Անդրանիկ:

Քսաներորդ դարում գեներալ դառար,
Յոթանասուն փայլուն հաղթանակ տարար,
Անմեղ ազգիդ արյան վրեժն առար,
Հայ ազգի հերոս, անմահ Անդրանիկ:

Մթության մեջ որոնում էիր թշնամուդ,
Քո սրից կաթում էր դահիճի արյուն,
Աշխարհով մեկ տարածվել է քո անուն,
Հայ ազգի հերոս, անմահ Անդրանիկ:

Ոսկուց մեղալներ կուրծքիդ զարդարված,
Կովի համար է պարզել Աստված,
Թշնամու դիեր ոտքիդ տակ փոված,
Հայ ազգի հերոս, անմահ Անդրանիկ:

Քեզ նման քաջեր ունի Հայաստան,
Այժմյան պարծանք մարշալ Բաղրամյան,
Մեծ հաղթանակով մտավ Գերմանիա,
Իսկ ես Մացակս ձեր զինված ծառա:

Երկրորդ քառյակից սկսած, կրկնվում են քառյակների վերջին երկու տողերը:

67 ԾՂմարիտ կախարդ

♩. 128 Allegretto animato



ԾըՂ-մա-րիտ, կա- խարդ է աշ-խար- փս կար-գը,



Մի սի-րուն տե- սար, այն է բը- նու- թյան գար- դը,



Մարդ կա կա- խար- դեւ է քո շքը- նաղ բախ- սը,



Մի- եվ-նույ- նէ, թող-նե- լու ենք այս աշ- խարհ:



Ա-սենք, թե պար- տե- գում սի-րա- ծին գըր- կած,



Իսկ ծա-ռա-նէ քող պատ-րաս-տում են խո- բո- ված,



Ա- դա-մանդ կըրծ-քի մեջ գը- լու- խըդ դըր-ված,

1.
 Մի- եվ-նույ- նե, թող-նե- լու- ենք այս աշ-խարհ,
 2.
 լու ենք այս աշ-խարհ:

Ծճմարիտ կախարդ է աշխարհիս կարգը,
 Մի սիրունի տեսար, այն է բնության զարդը,
 Մ'արդ կա կախարդել է քո չքնաղ բախտը,
 Միևնույն է, թողնելու ենք այս աշխարհ:

Ասենք թե պարտեզում սիրածիդ գրկած,
 Իսկ ծառաներդ պատրաստում են խորոված,
 Ադամանդ կրծքի մեջ զըլուխդ դրված,
 Միևնույն է թողնելու ենք այս աշխարհ:

Ուզում ես դարձիր արքայի գավակ,
 Երկրագունդը դեկավարիդ դու մենակ,
 Դարձիր երկիր, լուսնյակ, շարժիդ մեծ բանակ,
 Միևնույն է, թողնելու ենք այս աշխարհ:

Նստում եմ այգումս, նայում եմ ծառին,
 Դատապարտեմ նեղացումն աշխարհքին,
 Դատը պտուղ քաղցր է թվում իմ աչքին,
 Միևնույն է, թողնելու ենք այս աշխարհ:

Ինչեր ես դու պահանջում Մ'ացակ Գևորգի,
 Ոչինչ չունեմ, բացի մերկացված ամձից,
 Ով է իր հետ տարել քո չքնաղ գանձիդ,
 Միևնույն է, թողնելու ենք այս աշխարհ:

Երկրորդ և հաջորդող քառյակների վերջին երկտողերը կրկնվում են:

68 Յոթ կին

♩. 84 Moderato



Յո- թը կին ա- նե- ցի



ես տաս- նութ տա- րում,



Իբ-րեվ սո- խակ ման կու- գա- յի սա- րե- րում,



Նը- րանց սեր- անք վա-րա-



րել իմ սըր- տում,



Ինձ ան- ման եր-ջա-նիկ չը-կար աշ- խարհի-քում:



Երկ- բորդ կնո- ջի- ցըս ստա- ցա



զույգ տը- դա նը- վեր,



Ինձ տը- վին աշ-խար-հում ե- դած բո- լոր սեր,

Յորը կին առեցի ես տասնութ տարում,
Իբրև սոխակ ման կուգայի սարերում,
Նրանց սերն էր վարարել իմ սրտում,
Ինձ մման երջանիկ չկար աշխարհքում:

Երկրորդ կնոջիցս ստացա զույգ տղա նվեր,
Ինձ տվին աշխարհքում եղած բոլոր սեր,
Ես էլ դարձա սիրված հայրի անվան տեր,
Բախտս թույլ չտվեց վայելեմ այդ սեր:

